

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԻՒՄ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

47^{րդ} ՏԱՐԻ ԹԻՒ 2

ՆՈՐ ՇՐՋԱՆ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898

ՏՆՕՐԻՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԻՎԷԼԵԿԻՆԵԱՆ

Պապը Ալի ճատոտեպի, քիւ 20


“Մասիս,, ի իսկապարսիները կ'ոչգե գիտնայ
հասցեները այն բոլոր դպրոցներուն, որունք գիշդակ-
ներոշ, գաշաշակներոշ, աղքատիկ քաղերոշ մէջ կը
գտնուշին, եշ հոն գտնուշող ոշաւոշցիշներն աղ նիշքաւոշեւ
կարողշին քաշմաւորդապրուշելոյ քերքիս քիշերն աւաւնաւոշ:

Թ Ի Ի 2 . Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Նախնական կրթութիւն
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ
Դերասանահին (վեպ)
ԼԵԻՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ
Առաջին ձիւնն ի կունտ-կատար
Յ. Գ. Մ.
Խոհեր ՍԿԵՊՏԻԿ
Իրիկուան դաշնակումներ. Շառլ Պօտլեռ.
Թարգմ. Ս Ի Պ Ի Լ
Կորսուած Ս. ԲԱՐԲՈՒԹԼԵԱՆ
Պատշգամին աշջիկը
ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ
Կնոշ գեղեցկութիւնը
ՏՔԹ. ԳԱԻԻԹԵԱՆ
Ժամանցը ընտանիքներու մէջ
ՆԱՐԿԻՍ
ԳՐԱԿԱՆ ՇՍՐԺՈՒՄ
Արձակագիրներու իշխանը
Ա. ԱՆՏՕՆԵԱՆ
Կառապան Հէնշել
Մ. Շ.
ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ
Մանուկներու երեսակայութիւնը
Մ. Շ.
Տնտեսական կեանք եւ միջազգային քաղա-
քականութիւն Մ. Շ.

“Մասիս,, ի երրորդ քիշը հրապարակ պիտի ելնե
ներկայ աւետոյս վերջին եշ իբրեւ կաղանդի քիշ, իր
ձոխուշքեամբ, կաղանդէքի նուշեր մը պիտի ըլլայ իր
ընթերցողներուն :




ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

47^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 2

ՆՈՐ ՇՐՋԱՆ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898



ՏԱՐԵԴԱՐՁ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԾՆՆԴԵԱՆ


Ի Ն Ք Ն Ա Կ Ա Լ Ի Ն Մ Ե Ր Ո Յ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՒԼ - ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐԿԻՈՅ

Նորին կայս. վեհափառութեան ծննդեան երջանիկ տարեգարձին առթիւ, որ սրտի զեղուն ուրախութեամբ և ջերմ մաղթանքներով Օսմանեան մեծածաւալ կայսրութեան ամեն կողմերը եռանդազին կը տօնուի, կիսամսեայ ՄԱՍԻՍԻ խմբագրութիւնն ալ իր ամենէն սրտազին մաղթանքները կը բարձրացնէ առ Աստուած, որ թուրքիոյ Ամենասիրելի վեհապետը գեռ. երկա՛ր, երկա՛ր տարիներ իր իմաստուն վարչութեամբը երջանկութիւններէ երջանկութիւն առաջնորդէ իր հպատակները:

ՄԱՍԻՍԻ խմբագրութիւնը ձայնակցելով Օսմանեան մեծ կայսրութեան միլիոնաւոր հպատակներուն՝ կը գոչէ

Կեցցէ՛, յաւէտ կեցցէ՛ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՒԼ-ՀԱՄԻՏ ԻԱՆ Բ.



ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Մ Ի Գ Ա Յ Է Լ Շ Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն



ԲԿԱՐ ասենէ ի վեր մեր դպրոցներու արևսուր վիճակը մեր ընկերական ցաւերուն տեսականներէն մէկը դարձած է : Եղած են հարցնողներ թէ ինչու . շատ կը կասկածիմ : Մեր հասարակութեան նախնական կրթութիւնը այն տեսակ վիճակի մը մէջ չի գտնուիր, ուր կարելի ըլլար պղծիկ բարենորոգումներով դահանալ : Մեր Ուսումնական Խորհուրդը գիտակցած է թէ մեր նախակրթարանները հիմնական փոփոխութեան կը կարօտին : Իր գործունէութիւնը ասոր հակառակը կը ցուցնէ :

Նախ պէտք է ըմբռնել թէ նախակրթարանները վարող սկզբունքները ու նախակրթարաններու համար եղած գուրդուրանքը բոլորովին տարբեր է երկրորդական վարժարաններու համար երգածներէն : Երկրորդական վարժարանները համեմատաբար հասարակութեան մը մէկ պղծիկ մասին համար են ամէն տեղ , և պէտք է մնան միշտ սակաւներու առանձնաշնորհումը : Յետոյ առանց առողջ սկզբունքներով կազմակերպուած նախակրթարաններու գոյութեան , կարելի չէ արդիւնաւոր երկրորդական ուսումնարաններ երեւակայել : Մեր մէջ ասոր ճիշդ հակառակ ըմբռնում մը գոյութիւն ունեցած է միշտ :

Մեր , մասնաւորելով , Պոլսոյ նախակրթարանները , թաղական Խորհուրդներու , հոգաբարձութիւններու , անօրէններու ըմբռնումին ու քննահասոյքին ձգուած խեղճ հաստատութիւններ եղած են ընդհանրապէս , ուր մեր նոր սերունդը իր ապագայ կեանքին մէջ ատակ դասնալու անհրաժեշտ միջոցները պէտք էր ստանալ :

Բարոյական կեանքի բովանդակ գործունէութեան մէջ հասարակութիւնները երբ ուզեն զիրենք տանջող ցաւերէն , մոլութիւններէն ազատիլ , իրենց աչքը միշտ յառած պէտք է ըլլայ դէպի նոր սերունդը , ապագայի մեր շարունակութիւնը : Այն հասարակութիւնները , որոնք իրենց նոր սերունդին համար հոգատար են , իրենց ամբողջ տոհմին համար հոգ տարած կ'ըլլան : Հասարակութիւններու հոգւոյն մէջ տիրապետող տոյն բնագրական աւանդութիւնը բոլորովին ճիշտ է , երբ անիկայ նորածին մը աւելի պատկառանքով ու Խորհուրդներու մէջ կը տեսնէ քան թէ յաւիտենականին մէջ կորսուող մեծ անձնաւորութիւն մը , Ամեն ընտանեկան յարկի տակ ուր նորածին մը կ'աւելնայ , այդ ընտանիքին բարգաւաճման համար նոր յոյս մը կը ծլի հոն : Հասարակութեան մը բոլոր նորածինները , նորերը հաւաքական նոր

յոյսերն են, որոնցմով անիկայ իր ազագային համար աւելի բարգաւաճ վիճակ մը կ'ահնկալէ՝ իր նոր սերունդին ձեռքէն բռնած: Այն հասարակութիւնները որոնք չեն ըմբռնած այս բոլորը ու իրենց՝ նոր սերունդին հանդէպ ունեցած պարտաւորութիւններու ուղիղ գործադրութեանը մէջ թերացած, մեծ յուսախաբնները, թըշուառներն են անոնք:

Երբ մեր զաւակները կը ծնին, անոնց հետ կը ծնին նաեւ մեր ծնողական պարտաւորութիւնները, զիրենք բարոյապէս ու ֆիզիքապէս խնամելու համար: Ընտանեկան առաջին տարիներէն վերջը երբ երախան մանուկ կ'ըլլայ, ու անոր մէջ անհատը կը սկսի ճլտորիլ, պէտք է նաեւ անհատներու հաւաքական խումբը, հասարակութիւնը, ձեռք տայ ընտանիքին՝ կատարելու համար իր հանրային պարտաւորութիւնը, ու մանուկներու ֆիզիքապէս ու բարոյապէս զարգացման համար հոգ տանի:

Մանուկներու հանդէպ հանրութեան հոգատարութիւնը նուիրագործուած է արդէն բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ հանրային նախնական կրթութեան համար եղած բազմաթիւ, ձրի հաստատութիւններով:

Խեղճ, իրապէս նախապատմական թաղային նախակրթարաններ իբրեւ թէ քաղաքակիրթ երկիրներու՝ հանրային նախնական կրթութեան համար ունեցած հաստատութիւններուն տեղը պէտք է բռնեն մեր մէջ և մեր Ուսումնական Խորհուրդն ալ բոլոր այդ նախակրթարաններուն հսկող, ուղղութիւն տուող մարմինը պէտք է ըլլայ:

Առանց չափազանցած ըլլալու զգացումը ունենալու ամենքս կրնանք պնդել թէ՛ օգի, ջուրի չափ անհրաժեշտ եղող կազմակերպուած նախնական կրթութիւն մը չունինք մենք, գոնէ կեդրոնին

մէջ՝ ուրկէ կրնար նաեւ դաւառները տարածուիլ: Ներկայ անիմաստ դերքովը չեմ հաւատար երբէք որ մեր Ուսումնական Խորհուրդը կարենայ իր արդէն կատարածէն աւելին ընել: Իր ազգեցութեան չափը ճանչցուեցաւ արդէն նոյն իսկ ամսական ութը ոսկիով կրթական քննիչ մը պահել ուզած ատեն. չի կրցաւ իր քննիչին ամսական 8 ոսկին վճարել տալ, ու այսօր, հսկող և վարող Ուսումնական Խորհուրդ մը ունինք նոյն իսկ առանց այցելու քննիչի (inspecteur) մը: Պէտք է բարձրացնենք մեր Ուսումնական Խորհուրդի դերքը. առանց ատոր, համոզուելու ենք թէ մեր նոր սերունդին ընդհանուր նախնական կրթութեանը համար բան մը չենք կրնար ընել:

* * *

Ներկայ տարւոյս սկիզբները, Ուսումնական Խորհրդոյ հրատարակած Պորտոյ թաղային վարժարաններու վիճակացոյցէն կը տեսնենք թէ մայրաքաղաքիս մէջ 38 թաղային վարժարաններ ունինք 4483 երկսեռ աշակերտներով, 219 երկու սեռէ ուսուցիչներով ու ամսական 63,953 զրշ.ի պիւտճէով մը: Ասոնցմէ զատ 1898ի սկիզբին 8 փակ վարժարաններ կային, որոնցմէ ամբողջ տարւան մը միջոցին միայն 2ը կարելի եղած է բանալ: Սոյն վիճակագրական թուանշանները ամբողջացնելու համար պէտք է ըսել նաեւ թէ ի բաց առեալ պետական վարժարանները ուր 318 հայ ուսանողներ կը յաճախեն, կան 790 աշակերտներ՝ որոնցմէ 570ը կը յաճախեն զանազան մասնաւոր հայ վարժարաններ և 220 ալ օտար վարժարաններ: Եթէ ամենքը միտսին հաշուենք, Տաճկահայերու կեդրոնին մէջ, ուր հայերու մեծ համայնք մը խտացած է, հազիւ 6000 տղաք վարժարաններ կը յաճախեն:

Եթէ վերը գրուած վիճակագրական թուանշաններու մանրամասնութեանը մէջ մտնենք, պիտի տեսնենք թէ իրականութեամբ ոչ թէ 40 ալլ հազիւ 4 նախակրթարաններ ունինք որոնք նորէն, կրթական և մանկավարժական անթերի վիճակի մը մէջ չեն գտնուիր: Պոլսոյ մէջ ուր Պատրիարքարան և Ուսումնական խորհուրդը կայ. թաղեր կը գտնուին որոնք ամսական 150 և 250 զրշ ի նման պիւտճէներով կը կառավարուին: Տպագրական սխալ չի կարծէք, 150 և 250 զրշ ի պիւտճէներով:

Ինքզինքնիս չի խաբենք թէ Տաճասհայերը գոնէ Մայրաքաղաքիս մէջ կազմակերպուած կանոնաւոր նախնական կրթութիւն մը ունին. քառասուն նախակրթարաններով: Ես այն համոզումէն եմ թէ ճշմարիտ նախնական կրթութիւն մը չունինք մենք, ոչ թէ միայն գաւառներու ալլ, նաեւ Պոլսոյ մէջ ալ: Ուրիշ խօսքերով, մեր հասարակութիւնը իր նոր սերունդին հանդէպ իր ծանր պարտաւորութիւններուն դեռ չէ գիտակցած, Ուսումնական խորհուրդը սա իր ներկայ դիրքովը բան մը չկրնար ընել քանի որ հրաշքներուն դարը անցուցած ենք:

Կրթական այս տխուր կացութիւնը շատերու խղճմտանքը արդէն սկսած է խռովել. մանաւանդ որ ցանցնուած, անկերպարան նախնական կրթութեամբ մը հասարակութիւն մը՝ իր նոր սերունդին վրայ ունեցած հսկողութեան միջոցները և անոր ուղղութիւն ցոյց տալու պաշտօնը կը կորսնցնէ ձեռքէն: Բա՛ւ է, պէտք է վերջ մը տանք մեր անգիտական, սխալ, անբնական կրթութեան, ու ասոր համար ամենէն աւելի Պատրիարքարանէն և իր Ուսումնական խորհուրդէն կը սպասենք, որ հասարակութեան նախնական կրթութեան խնդիրը լուրջ կերպով ձեռք առնէ, ու վերջ մը տայ մեր դպրոցներուն մէջ տիրող անկերպարան վիճակին:

* * *

րուն մէջ տիրող անկերպարան վիճակին:

Աւերորդ կը սեպեմ պատմել թէ Ուսումնական խորհուրդը ինչ նշանակալից բան ըրած է մեր մէջ. միայն աստե՛ն է շեշտելու որ շատ բաներ կրնայ ընել մեր հասարակութեան նախնական կրթութիւնը վերջապէս բարուք վիճակի մը մէջ դնելու համար:

Ամեն պատասխանատուութիւն Ուսումնական խորհուրդի եկող գացող անդամներուն վրայ պէտք չէ բեռնել սակայն: Այդ խորհուրդին բաժին ելած նոյն իսկ ընկերական յղիքն է, որով իր բոլոր սրոյումները կրաւորական վիճակի մը մատնուած են, գոնէ այն տեսակի որոյումները որոնք ամենէն կենսականներն են մեր նախակրթարաններու վիճակը բարուքելու համար:

Նախ Պոլսոյ մեր բոլոր նախակրթարանները բացարձակ կերպով Ուսումնական խորհուրդի իրաւասութեանը տակ պէտք է ըլլան: Բոլոր նախակրթարանները, առանց բացառութեան, Ուսումնական խորհուրդի կողմանէ առաջարկուած միեւնոյն ծրագիրը պէտք է ունենան, զոր Պատրիարքարանի խորհուրդի մը իրաւունքին ու ժողովը անկարելի պէտք է ըլլայ ազգային ու է նախակրթարանի մը մէջ անգործադրելի ձգելը: Ասոր համար ամենէն կենսական խնդիրն է, որ բարձրացնենք մեր Ուսումնական խորհուրդի դիրքը:

Մեր մէջ իւրաքանչիւր նախակրթարան իր յարակից եկեղեցիի Թաղական խորհուրդին և Հոգաբարձութեան մը բացարձակ իրաւասութեան տակ է գործնականապէս, թէեւ տեսականապէս տարբեր եղած ըլլան օրէնքի արամադրութիւնները: Ասոնց անմիջական հետեւանքն է որ մեր նախակրթարանները շատ անհաւասար վիճակի մէջ կը գըս-

նուին, ու իրենց դիպուածու միայն ստացած բարուք վիճակը անկայուն ըլլալու դատապարտուած է, քանի որ նոր հոգաբարձութիւն մը իր կոչումը իր նախորդներէն տարբեր կերպով հասկընալով, դէպի աւելի լաւը կամ աւելի գէշը նոր անօրինութիւններ պիտի ընէ միշտ:

Այն հասարակութիւնները որոնք քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի մը վրայ կը գտնուին, անոնց համար կը հասկնամ, որ իւրաքանչիւր համայնք ուզէ իր ձեռներէցութեամբը կազմակերպել իր կրթական գործը: Բայց մեզի պէս հասարակութեան մը համար, որուն մէջ ոչ թէ միայն նախնական կրթութեան լաւագոյն ուղղութեան դիտակցողներ կը պակսին, այլ նոյն իսկ կրթութիւնը ինքը հանրութեան համար քաղաքակրթութեան մեծագոյն օգուտներէն մէկը եղած ըլլալը չէ ըմբռնուած, այնքան ատեն որ հոգաբարձութիւնները ինքզինքնին թաղային Ուսումնական Խորհուրդներու տեղը գնեն, ու այն քան ատեն որ Պատրիարքարանի Ընդհ. Տաճկահայերու Ուսումնական Խորհուրդը չը սկսի ուղղակի ինքը վարել մեր բոլոր նախակրթարանները, մեր հասարակութիւնը չի պիտի ունենայ այն հաստատութիւնները, որոնց մէջ մեզ նոր սերունդը, ընտանիքին յարկէն վերջը կարող ըլլայ բարոյական ու ֆիզիքական առողջ ինամք մը ստանալ անոնցմէ, որոնց յաջորդը ըլլալ կոչուած է ինքը:

Հասարակութեան մը մէջ յուր կերպով կազմակերպուած նախակրթարանները մարդկային օւսման ճիւղին մէջ բոյն դրած Բեպտիստականներուն կը նմանին. որքան յառաջ երթայ հիւանդութիւնը իր աւերումին մէջ, այնքան կեանքը, շունչը կը պակսի անհատին: Դժբախտ են այն հասարակութիւնները՝ որոնք սխալ, ձախորդ կերպով կազմակեր-

պուած նախնական կրթութիւն մը ունին. անոնք իրենց աչքերը ապագայ ոչ նիւթական և ոչ ալ բարոյական բարեգաւաճումի մը կրնան յառել, առանց մեծ յուսախաբութիւններ կրելու:

Մեր նախնական կրթութեան համար եղած հաստատութիւնները լաւագոյն վիճակի մը մէջ բերելու համար առաջարկուելիքները շատ պարզ են, ու մանաւանդ գիւրաւ գործադրելի. բաւական է որ ամբողջ Պատրիարքարանը ցանկայ այդ բանին:

Նախ առանց մանրամասնութեան մէջ մտնելու թէ Ուսումնական Խորհուրդի կողմէ կազմուած ծրագիրը նախակրթարաններու մէջ գործադրելու համար ինչ անյարմարութիւններ և մանկավարժական թերութիւններ ունի, պէտք է անվիճելի կերպով ընդունիլ թէ Բեպտիստական նախակրթարանները պէտք է բացարձակ կերպով միջնոյն ծրագիրը ունենան: Ըսուածը արդէն նորութիւն մը չէ, այլ շեշտուածը սա կէտն է թէ հինցած ճշմարտութիւն մը իրապէս գործադրելու չափ կարողութիւն պէտք է ունենանք վերջապէս:

Յետոյ ամեն թաղի մէջ թաղեցիներու թուոյն համեմատ նախակրթարան մը ունենալով, (ինչ որ գոնէ Պոլսոյ մէջ միայն նիւթական շէնքովը գոյութիւն ունի), Ուսումնական Խորհուրդը պէտք է յանձնէ զայն իր իրողէ նշանակած գաստիարակի մը՝ որուն պարտաւորութիւնը պիտի ըլլայ իր 3-4 կամ թաղին մեծութեան համեմատ աւելի պաշտօնեաներով կատարեալ ճշգրտութեամբ ու մանաւանդ հասկնալով գործադրել իրեն յանձնուած ծրագրին բոլոր կէտերը:

Գալով նիւթական կողմին, Ուսումնական Խորհուրդին իսկ հրատարակած վերջին վիճակացոյցէն կերեւայ թէ մեր՝ Պոլսոյ մէջ ունեցած նախակրթարաններուն համար եղած ամսական 63953 զր. 45 46353 զր. 2 կը հայ-

Թայթուի դպրոցներու յարակից եկեղեցիներէն, ու 17600 զրշ. ալ աշակերտներու թոշակներէն : Նախ թագական խորհուրդներու կողմէ աւելի բարւոք կազմակերպութեամբ մը եկեղեցիին մէջ թաղային դպրոցներուն համար ամսական 60 և աւելի հազարներ կարելի էր հայթայթել, յատկացնելու համար հասարակութեան նախնական կրթութեանը : Առանց կազմակերպութեան երբ կարելի կ'ըլլայ ամսական 46353 զրշ. հաւաքել կրթական դործին համար, կրնանք վստահ ըլլալ որ նոր կազմակերպութեամբ մը մեր եկեղեցիներէն նոյն իսկ կրնանք ամսական 80000 զրշ. ստանալ, որով կարելի կ'ըլլայ նաև նախակրթարաններու համար անխմաստ, նոյն իսկ փաստակար եղող դպրոցական թոշակի ջնջումը աշակերտներուն համար : Ծնողքներ կան որոնք թէեւ նիւթապէս անկարող, սակայն աւելի նախամեծար կը համարին իրենց տղաքը բնաւ դպրոց չի դրկել քան թէ ձրիաբար : Պէտք է ընդունիլ որ իրաւունք չունինք աղքատէն իր արժանապատուութեան դպացումն ալ առնելու : Յետոյ նոյն իսկ հանրութեան հաստատութիւններուն մէջ ձրիի և թոշակաւորի այն պոռոտ տարբերութիւնը որ ամեն օր մանուկներու մաքուր հոգիին ու մատղայ ուղեղին մէջ կը շեշտուի, աղքատի զակիին համար դըպրոցական կեանքին կապուող դառն յիշատակը կ'ըլլայ ապագային մէջ, և կամ առաջին աւիթը կ'ըլլայ տղուն երեսէն արժանապատուութեան քողը պատուելու : Երկու պարագաներն ալ հանրութեան համար դժբաղդ հետեւանքներ միայն կրնանունենալ : Ծնողքները երբ իրենց զաւակները իրենց գուրգուրանքին, խնամքին մէջ կը փաթթեն, անմիջական նիւթական փոխարինութիւն մը չեն սպասեր անոնցմէ, այլ անոնց սպագայի մասին միայն

կրնան երազներ հիւսել : Համայնքները իրաւունք չունին իրենց նոր բողոքներ արձակող սերունդէն դպրոցական թոշակ պահանջել զիրենք կրթելու համար : Քանի որ իրենց ծնունդը անուամբ ևնք, մեր, համայնքին պարտաւորութիւնն է, զիրենք կեանքին պատրաստելու համար անհրաժեշտ նախնական կրթութիւնը տալ իրենց :

Երբ բոլոր նախակրթարաններու համար դործադրենք միօրինակ ծրագիր մը, հանենք նախակրթարաններէն իւրաքանչիւր աշակերտին շաբաթը գրեթէ 30 բարայ եկող ոչինչ դպրոցական թոշակը, և եկեղեցիներու միջոցաւ մեր հասարակութենէն հաւաքենք մեր նախնական կրթութեան անհրաժեշտ եղող ամսական գումարը, արդէն հոգաբարձութիւնները ինքնիրեն աւելորդ մարմիններ կը դառնան : Այն ատեն մեր բոլոր նախակրթարանները միեւնոյն ծրագրով և Ուսումնական Խորհուրդի կողմէ որոշուած սնօրէններու առաջնորդութեամբ, որոնք իրենց ուսուցչական խումբը պէտք է կազմակերպեն, միօրինակ, կանոնաւոր վիճակ մը կը ստանան : Պատրիարքարանը կրնար նաև իր Ուսումնական Խորհուրդի միջոցաւ որոշել թէ իւրաքանչիւր նախակրթարան իր համայնքի մեծութեան համեմատ ամսական որչափ պիւտճէ մը պէտք է ունենայ. ու եթէ որոշուած գումարը, թաղին աղքատ ըլլալուն պատճառաւ, դպրոցին յարակից գտնուող եկեղեցիէն կարելի չըլլար հայթայթել ամբողջապէս, կարելի էր լրացնել զայն հարուստ թաղերու հարուստ հասոյթներէն : Հասոյթներու կանոնաւորման կամ շատնալուն համար նոյն իսկ կարելի էր ընդհանուր կրթական տուրք մը հաստատել Պատրիարքարանի միջոցաւ : Հարուստներու և դիւրակեացներու ամսական 5 ական զրուշովը, և միջակային դասին ալ ամիսը միայն 2 զրշ. վճա-

ընդամենը թէ ամսական 100000 զրշ. կըրթական գործին համար տրամադրելի գումար մը կ'ունենալինք, և թէ նախնական կրթութիւնը միջակային դասէն վար եզոյններուն համար առանց գրամական փոխարինութեան կ'ըլլար: Հասարակութիւնները շնորհ մը չէ որ կ'ընեն երբ իրենց նոր սերունդին մանուկ նախնական կրթութեանը համար նիւթական զոհողութիւններ կ'ընեն. այդ բանը մտքերնուն չանցնեն, քաղաքակիրթ երկրի մը օրէնքները և բաբունումը կը ստիպեն զիրենք, որպէս զի կատարեն իրենց այդ պարտաւորութիւնը:

Ամսական 100,000 զրշ. կրթական տուրքի մը հաւաքումն ալ, եթէ կանոնաւորութեան ոգին ու գործելու կամքը ունենանք մեր հանրային գործերուն մէջ, շատ դիւրին կերպով կարելի է ի գլուխ հանել: Քանի որ ամէն թաղ թաղական խորհուրդ մը, եկեղեցի մը ունի, պէտք է որ ամէն թաղ առանց միջոցաւ հաւաքէ իր թաղին կրթական տուրքը և գայն Պատրիարքարան զրկէ: Համադրում եմ որ այս տեսակ սրտում մը իր գործադրութեան ստեն պիտի քաջալերուէր մեր հասարակութեան միջակային դասէն, որուն վրայ մեր յոյսը դնելով պէտք է միշտ ճամբայ ելնենք: Քեր հարուստները զմեզ յուսախաբ միայն կրնան ընել, որոնք մեր մտաւորական և կրթական կեանքին մէջ շատ հազուադէպ բացառութիւններէ զատ գրեթէ մասնակցութիւն իսկ չեն ունեցած, և երբ ամչնալով իրենց հարստութեան հետ բազդատելով չնչին գումար մը տուած են կրթական կամ մտաւորական գործին համար, երեւակայած են թէ շնորհ մը կ'ընեն այն հասարակութեան և միջավայրին, որոնց միայն կը պարտին իրենց հարստութիւնը:

Պատրիարքարանին և իր Ուսումնական Խորհուրդին առաջարկածս լուրջ,

ծանրակշիռ խնդիր մըն է: Վերցնենք հոգաբարձութիւնները որոնք ընդհանրապէս մնասած են մեր կրթական գործին, վերցնենք նախակրթարաններու մէջէ աշակերտական թոշակները, որոնք օտարներու առջեւ մեր հասարակութեան զարգացման ու դատողութեան մասին շատ ախուր դաղափար մը կուտան. Ուսումնական Խորհուրդի միջոցաւ ընդհանուր, միօրինակ և ճիշտ կերպով կազմուած ծրագիր մը հաստատենք նախակրթարաններուն համար, ու այդ նախակրթարանները յանձնենք նորէն Ուսումնական Խորհուրդին կողմէ որոշուած ընդունակ, կարող անօրէններու, որոնք անթերի կերպով Ուսումնական Խորհուրդի ծրագիրը կարենան գործադրել: Պատրիարքարանի միջոցաւ բաժնենք ամսական 100,000 զրշ. ի գումարը բոլոր թաղերուն վրայ իրենց մեծութեան և բարեկեցութեան աստիճանովը, օգնութեան համարնք այդ 250, 200 նոյն իսկ 150 զրշ. ամսական պիւտճէով կառավարուող աղքատիկ թաղերու նախակրթարաններուն. բանանք նորէն աղքատիկ թաղերու մէջ փակ մնացած քանի մը նախակրթարանները, ու այս բոլորը գործադրուելէ վերջ ամեն ոք կարող պիտի ըլլայ տեսնելու այն կերպարանափոխութիւնը զոր պիտի ստանայ մեր նախնական կրթութիւնը և ստով մեր նոր սերունդը:

Նախակրթարաններու կազմակերպութեան գործին իրր վերջաբան նաեւ պէտք է սա կէտերը շեշտել որ Պատրիարքարանը վերջ մը պէտք է տայ Ուսումնական Խորհուրդի այցելու քըննիչներ (inspecteur) հաստատել ուղեւորատեն իրեն և թաղական խորհուրդներու միջեւ տեղի ունեցած կատակերգութիւններուն: Այս առթիւ պէտք է նաև աս կէտն ալ անելցնել որ Պատրիարքարանի Խորհուրդի մը անհրաժեշտ պաշտօնեաներուն թոշակները առանձին թա-

ղերու վրայ չեն ծանրանար, այլ Պատրիարքարանի պարտաւորութիւնն իսկ է հայթայթել անոնց ամսականները :

Եթէ Ուսումնական Խորհուրդը իր անհրաժեշտ դիրքը ստանալով կազմակերպէ մեր նախակրթարանները, եւ լուրջ քննութենէ մը ետքը ընտրէ իր գոնէ երկու ամսականաւոր քննիչ պաշտօնները, որոնց միակ զբաղումը ըլլայ միշտ շրջի բոլոր թաղային նախակրթարանները և ամեն ինչ մանրամասնութեամբ Ուսումնական Խորհուրդին ղեկուցանել, կրնանք յուսալ որ 15 տարիի չափ վերջը մենէ աւելի կրթուած, ու աւելի առողջ դաստղութիւններով, ու կեանքի կռուին համար ալ աւելի տոկուն բնաւորութեամբ նոր սերունդ մը կրնայ յաջորդել մեզի : Հակառակ պարագային չենք գիտեր թէ ո՞ւր պիտի յանդի մեր հասարակութեան բարոյական անկումին վերջը :

Կրնա՞նք յուսալ թէ Պատրիարքարանը և Ուսումնական Խորհուրդը պիտի սկսին մտածել, հասարակութեան համար այնքան թանկագին եղող նախակրթարաններու խնդրին նկատմամբ, ու աշխատին հանրօգուտ դարձ մը կատարել :

ԴԵՐԱՍԱՆՈՒ ՀԻՆ

ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

(ՄԻԻՆԻՔ)



F.



ԲԱՆՏ կիրակի օրուան նոր զգեստներով, արմուկը իր աշխատութեան սեղանին յենած, ջգագիտական ամաթիրթի մը նախորդ իրեկունը ստացած վերջին համարը կը թղթատէր, ձեռքի անխոյթ թափած շարժումով մը, կարծես բանով մը զբաղուած լինելու համար միայն :

Հատորը վերջացաւ :

Գոցեց, նետեց անդին միւս գրքերուն վրայ, գրաւ աջ արմուկն ալ սեղանին, ու զլուխը առաւ ամերուն մէջ, իր բուռական երկար մազերէն գանգուր մը կամաց մը անջատուելով իր ընկերներէն գալարուեցաւ զգուշ մանրադիտակի փայլուն ու հպարտ վզին :

Ու Հրանտ երկար մնաց այդպէս անշարժ . մինչև որ յանկարծ խիստ մօտիկէն հնչող սարեակի մը սուր ձիչը անոր զուլար ակամայ բարձրացնել տուաւ :

Թռչունը պատահանին մէջէն ցատկեց սեղանի գրքերուն վրայ, հոնկէ ալ նորէն պատուհանը . ուր գործի մարդու մը կատարեալ հապճեպով մաքրեց կտուցիկովը կուրծքի փետուրներէն մէկ-երկուքը, յետոյ նետուեցաւ դատարկութեան մէջ, ու թռաւ դէպի դիմացի բարձր թիւնին իր ազգայիններու փոքրիկ խմբին միանալու, որ հոն ճիւղքին մէջ սուկալի աղմուկ էր բարձրացուցեր :

Հրանտ դեռ արմուկները սեղանին, աչքերը գոց, լարուած ականջով կը հետեւէր այդ ճշլուրդոցին :

«Սեռական ընտրութիւն . . . սէր . . .

նոյն բանը ամէն տեղ , ամենքին համար . . .
եւ յաւիտեանական զարգացում , միայն հոն մեր
թիթհնիին վրայ առանց փիլիսոփայութեան . . . »

Թըս՝ ո՛ւ՛ն՝ .

Ու փոքրիկ հոյը -տերեւեներուն թաւու-
տէն դուրս խոյացաւ դէպի նոր ասպարէզ մը
իր «սեռական ընտրութեան» , իր «յաւիտե-
ական զարգացման» :

Երիտասարդը շտկուեցաւ , զոյգ ոտքերը
պարզեց ձիգ տաաջ , կրթընեցաւ աթոռի թի-
կունքին , ու ձեռքերը գլխուն ետեւը կապած՝
հայեացքը դառնց հրկնքի տաք-կապոյտ մէկ
կտորին :

Ու պատկերացաւ աչքերուն գէմ այն դով
ու մամոտ խոտոջը՝ ուս-ուսի տուած ամեհի
ժայռերու հովանիին տակ . ուր ծովը , մաք-
րամոլ կատուի մը պէս , իր հսկայի լեզուովը
անդապար կր լիզէր յատակը փոռած նուրբ
ու փափուկ աւազէ մորթիին եզերքը :

Եւ հոն խոտոյի պատր կազմող ժայռի
մէկ բեկուածքին վրայ նստած իրենք , ինքն
ու Մինէն : Ինքը յենած պատին . իր ուսին
աղջկան ձեռքը . այնպէս պատահաբար , իս-
տեղու առեւն դրուած . ու աղջկան դո՛ւրբը .
հտեւի տաքէն ու երկար քալելէն յոգնած :
Թէ ինչ կը խօսէին այնպէս անվերջ՝ տղան
այլ եւս չէր յիշեր բարորակին . զիտէր սակայն
որ շատ երկրորդական բաներ էին : Միայն
կ'ըզգար զեռ միջտ , ու ինչպէս որոշ , աղջկան
անառակ գանգուրներէն այն ոլորուն փունջը ,
որ իր այտին ու չրթունքներուն վրայ ինկած՝
Մինէի ամէն շունչ առնելուն իր գէմքին վրայ
կը գալարէր . ու կ'ըզգար այն օրօրող ու
զգացումները շոյող բոյրը , որ այդ մազերու
խառնութենէն կը հոսէր : Կ'ըզգար , կարծես
զեռ հիմա , այն ախորժ ու փափուկ ջերմու-
թիւնը իր ուսին ու թեւին վրայ՝ աղջկան
լանջին , ձեռքին ու հետզհետէ ծանրացող
գլխուն տակ : Ու կը յիշէր իր զգացումներուն
մէջ մաղուած այն անհուն ձգտումը հնար
եղածին չափ աւելի մօտ , աւելի սեղմ լինե-
լու այդ ջերմութեան , աւելի խոր , աւելի
պինդ թաղելու իր գէմքը մազերու այդ
զգուանքին մէջ . միայն . . . միայն առանց
չատ նշմարել տալու :

Հրանտ յանկարծ սթափեցաւ , ու ընդոտ

չարժում մը ըրաւ աթոռին վրայ : Այս երկու
օրը դուրսէ քսան անգամ մը բռնուեր էր այդ
նոյն մտածումներէն այդ նոյն պատկերի իր
յուզումները որսացող ուռկանին մէջ :

Փարոսին տակի զազարէն վերջն էր , որ
տնոնք նորէն անընդհատ խօսակցելով՝ շա-
րունակիւր էին իրենց պտոյտը ծովին ափովը ,
երկար , մինչեւ այդ հովասուն խոտոջը , որ
հիմա տղուն համար ճակատադրական էր
դարձեր , ու անոր ուղեղէն ո՛չ մէկ կերպ
զուրս գալ չէր ուզեր :

Ամօթէն ու զայրոյթէն զարկաւ բռունց-
քը սեղա՛ ին , ցտակեց աթոռէն վեր .

«Ի՛նչ յիմար բան . այս ալ նոր ելաւ .
օրէ օր սկսայ աւելի երախայ դառնալ» :

Ու արագ քայլերով ուղղուեցաւ դէպի
սանդուղը , վարը , իրեններուն քով կերպով
մը արամադրութիւնը փոխելու համար :

Հրանտ երկու տարի առաջ մեծ յաջո-
ղութեամբ տուեր էր իր փիլիսոփայի տօք-
ստրութեան քննութիւնը՝ Հայէի համալսարաւ-
նին մէջ , ուր պարապած էր երկար ատեն ,
ու արդէն շատոնց գրուած բնութագրութեան
ուսուցչապետի համակրանքը իր կանոնաւոր
ու լուրջ աշխատանքովը , մասնաւորապէս
ուղեղի վրայ : Մեծ զովեստով էր ընդուն-
ուած իր աւարտականի շարագրութիւնը , որ
«մեծ ու փոքր ուղեղի գորշ կեղեւները իրա-
րու կապակցող թելերու մասին» մանրայի-
տակի վրայ ծռած երկարատեւ ուսումնասի-
րութեան արդիւնք էր : Դեռ աւարտելէն
վերջն ալ ան մնացեր էր նոյն համալսարանը ,
իր ուսուցչապետի տուած դիւրութիւններուն
տակ իր գործնական աշխատութիւնները շա-
րունակելու . եւ ուսուցչապետի զրգմամբ ալ
չուտով յաջողէր էր հրապարակային մրցումի
մասնելու , եւ ստացեր իրաւունք համալսա-
րանին մէջ դասախօսելու իբրեւ փրկատաւ
ցենդ ջղային կեղբոնի մասնագիտութեամբ :

Այս դարնան եկեր էր Պօլիս , մինչեւ
ձմեռուան կիսամեակը մնալու դիտումով .
մասամբ իր մօրն ու եղբօրը անվերջ կոչե-
րուն բաւականութիւն տալու համար , մա-
սամբ իր ծննդավայրին մէջ քիչ մը հանգըս-
տանալու , մասամբ ալ զօէլէնթէրներու
կանկր-հանգոյցներուն վրայ դրած իր նոր
աշխատութեան համար թարմ ու առատ

փորձի նիւթ ունենալու ծովուն մօտիկ : Եւ այս չորս ամիսէն աւելի էր , որ իրեննեւրուն քովն էր արդէն :

Իրմէն քիչ մը միայն առաջ եկած էր Մինէ Թիֆլիսէն , ուր նախորդ ձմեռը դերասանական խումբին մէջն էր եղած : Խումբին մէջ պառակտում իյնալով գերասանները մեծ մասով ցրուեր էին գաւառները . իսկ Մինէ զժողձ ձգեր եկեր էր Պոլիս՝ մտածելով կերպ մը միանալ հասակի նոր ուժերուն ու հոս զորձի կապուիլ :

Մինէ որք էր . մայրը կորսնցուցած էր դեռ իր մանկութեանը իրենց Պոլիս եղած ժամանակը : Իսկ հայրը մեռեր էր քանի մը տարի առաջ Օսեսա , հրա ինքը Մոսկուա էր դեռ թատերական ընթացքի հետեւելու համար : Պոլսի մէջ իր ամենէն մտերիմ ազգականը՝ իր աւագ մորաքոյրն էր , որբուայրին , որ հիմա իր մէկ-հատիկ հազիւ տասնամեայ աղջկանը հետ Գատրգիւղ կ'ապրէր : Եւ արդէն անհրաժեշտ սովորութիւն մը դարձեր էր , որ Մինէ ամէն Պոլիս գալուն անպատճառ այդ մօրաքրոջը տունը իջեւանի , որ իրօք մօր մը պէս քրոջը որբին վրայ կը գուրգուրար : Վերջին անգամ հինգ-վեց տարի առաջ եկած էր Մինէ հօրը հետ :

Եւ հիմա իր խոշոր ծրագիրներովը հազիւ ոտքը Պոլիս դրած էր , երբ սիրուն երազները ցնդեր էին իսկոյն : Ո՛չ այն հասարակութիւնը , ո՛չ իր երեւակայած դերասանները կային հոս : Եղածներու ու քանի մը գրագէտներու հետ մտեր էր կապակցութեան , եւ հազիւ յաջողեր էին հազար ու մէկ զժուարութիւններով վեց ամսուան մէջ երկու ներկայացում տալ . խաղաղողներու ալ մէկ խոշոր մասը սիրողներ եղած էին միայն : Թերթերուն մէջ քիչ մը խօսեր ու գովեստներ էին տուեր « տաղանդաւոր , չնորհաչի ու դեռատի դերասանուհիի » մասին , որ « սուսական ոստանին մէջ իր կրթութիւնն ու արուեստը կատարելագործած՝ իջած էր այդ փշոտ սապարէզը » : Ահա՛ այս էր եղած իր բոլոր օգուտը , քանի մը սակի զրպանի ծախքով :

Մինէ ու Հրամոտ շատ տարօրինակ կերպով իրարու հանդիպեր էին : Հրամոտի եղբայրը ամուսնացած էր , աղուն համալսարանը

եղած ժամանակը : Իսկ մէկ երկու տարի վերջը երբ ամառ մը եկեր էր ու ծանօթացեր իր նոր ազգականներուն հետ , Մինէ արդէն հօրը հետ նորէն վերադարձած էր Ռուսաստան . այնպէս որ երկուքը զեռ բնու իրար չէին տեսած : Ընտանիքին մէջ սակայն երկուքի մօտին ալ բնականապէս յաճախ կը խօսուէր , եւ տեսակ մը աւանդական-առասպելական գոյներով յարգանքի խանդաղատանքի ու զարմանքի խառն զգացումով մը :

Երբ առաջին անգամ երկուքը իրար տեսեր էին , երկուքն ալ ապշած դիտեր էին վայրկեան մը իրար :

— Բայց ես ձեզի բոլորովն ուրիշ տեսակ կ'երեւակայէի . եղեր էր աղջկան առաջին խօսքը : Այնպէս լուրջ , մաւր , դիտակա՛ն , երկա՛ր , փառաւոր մօրուքով , ակնոյններով , ու խոշոր , լա՛յն ոտքերով :

Ու ծիծաղեր էին բոլորը միասին :

— Ուրեմն ուրիշ խօսքով ձեր առաջին տպաւորութիւնը հրասթափու մն է :

— Այո՛ , բացարձակապէս :

Ու իր ձեռքը ջերմ շարժումով մը պարզեր էր աղուն :

— Համբուրուիլ , համբուրուիլ . ու « Դուք » եւ « Ձեզ » երբ մէկզի , հրամայեր էր Հրամոտի եղբայրը :

Հրամանը կատարուած էր անմիջապէս . ու նոյն վայրկեանէն ալ սկսեր էր այն կէտլուրջ , կէտ-կատակ , հեղնոտ , իրար շարչբազ ու միեւնոյն ժամանակ իրարմով խնց ելնող մտերմութիւնը : Հրամոտնց տունը ոտք դնելուն պէս՝ Մինէի առաջին բառը « քուզէն » էր : Եւ միայն քուզէնի տունը չէր , որ անոնք իրարու կը հանդիպէին . շարաթը մէկ-երկու անգամ միասին էին սովորաբար , երբ չըջակայքը կամ ծովուն վրայ պտոյտի կ'եղնէին միասին : Ու ալ այնպէս սկսեր էին զրազիլ իրարմով , որ հարսը սկսեր էր շնորհքով նախանձիլ :

— Ի՞նչ է այդ . մինակ « քուզէն » ու ու քուզէն » . մինք ալ մարդ ենք հոս :

Պատասխանը ծաւալ ծիծաղ մըն էր ի հարկէ :

Միայն վերջերը հետզհետէ սկսած էր տեսակ մը զուսպ ու սնրնական շեշտ մանիկ անոնց փոխադարձ վարմունքին մէջ : Տղան

կարծես ճնշող , կասեցընող կապ մը ունէր լեղուին վրայ . ու զանազան պատրուակներով սկսեր էր խուսափիլ իրենց շատ շուտաշուտ միտին լինելէն : Ազջիկը այս կէտը շատ աղէկ կ'ըզգար , բայց ամէն բան չի նըմաքելու . կր զարնէր . մանաւանդ նկատած էր , ո , հիմա ինքն ալ երեսն իր բոլոր ճիգերուն հակառակ անոտոր կերպով կը լըջանար անոր քովը :

Իրիկուն մը թեւ-թեւի լեցուն լուսնին տակ շրջած էին ամբողջ ժամ մը , գրեթէ , աւանց բառ մը իրարու հետ փոխանակելու . բայց երկուքն ալ գո՛հ , իրարու մօտիկ լինելու հեշտին զգացումով մը , տաանց երբէք խօսակցութեան պակասը զգալու : Տուն մըսեղու տոնն միայն անդրադարձեր էին յանկարծ երկուքն ալ , ու կանց էին առեր իրարու ձեռք բռնած . մինչեւ որ աղջիկը սկսեր էր բարձրաձայն խնդալ ինքզինքը հեղնելով :

—Չէ , Հրանտ , հարս դառնալու հասունցեր եմ արդէն . արդէն սկսայ չխօսական դառնալ :

Այդ գիշերէն վերջն էր , որ դիտամ մը թէ պատահմամբ երկու շարժումն չափ իրար չէին տեսեր , Ծէնէրի իրենց վերջին հանդիպումէն ի վեր :

« Երմարութիւն է » . կը կրկնէր հիմա Հրանտ ամառուղիներէն վար իջնալով . « Բանի որ է գործիս վրայ լուրջ կեդրոնացած չեմ , պատճառը սա է , եթէ զբաղիմ ամեն ինչ կ'անցնի » :

Ու մտաւ սրահ :

Պարտէղի դռան զոյգ փեղկերը բաց էին կանակի վրայ : Եւ քայլ մը միայն անդին , խաղի կանանչ փոքր սեղանին երկու կողմը , դէմ-դէմի նստած էին երկու հոգի լուսնու լուրջ . ամբողջովին խորասուզուած իրենց քայած ու նետած խաղի թուղթերուն հաշուին մէջ :

Մէկը երիտասարդի եղբայրն էր . քուստունը անցած , քիչ մը ձեռնկած . բարեկաղմ ու դէպի գերը հակող մարդ մը :

Սաղակիցն ալ զրացի մըն էր , իրենց զիմացի ամառանոցէն , ու Հրանտի եղբոր կիրակնօրեայ մշտական ընկերը : Շէկ , ծափ

աչքերով , կարճահասակ , բաւական տարիքոտ , բայց շիք հագուած լէվանդէն մը :

— Ահա , վերջնապէս , մեր խլուրդը դուրս է ելեր իր բոյնէն . բացազանչեց Օհաննէս կտարած Փրանսերէնով մը , երբ եղբորը գալը նշմարեց : Դո՛ւք բտէք , խնդրեմ , պարոն Ռէնեակ , ինչի՞ է նման այս տղուն կեանքը . քաշուէ՞ ծակի մը մէջ ու անվերջ կարգա՞ ու գծէ՞ :

— Բարեւ ձեզի , պարոն . զիմեց Հրանտ հիւրին , առանց եղբորը խօսքերուն շատ կարեւորութիւն տալու :

Փրանսացին իր բարակ ու ձերմակ ձեռքը ձկուն շարժումով մը սուտ երիտասարդին , ու թեթեւ մը ունքերը ժողվելով կցեց .

— Ձեր եղբայրը իրաւունք ունի , պարոն Ալիմեան . Հաւատացէ՛ք ինձի , տարիները կ'անցնին . ու ձեր այդ գրքերէն ու մանրագիծակէն ձեզի խկապէս բան մը չի մնար : Եթէ մարդուս ձերութեանը արժէք ունեցող բան մը կը մնայ , լայն ալ ապրած կեանքի յիշատակներն են միայն . բայց ապրած , ո՛չ թէ կարդացած , կամ գծած , Բիչ մըն ալ երիտասարդական յիմարութիւններ ընելու է . փորձուած մարդու խորհուրդին ականջ զըրէք . երջանկութիւնը երիտասարդութեան մէջն է , երիտասարդութիւնն ալ յիմարութեան :

Ու աչքովը նշանակելի կծկում մը ըրաւ :

— Այո՛ , արդէն խոչոր , անիմաստ յիմարութիւն մըն ալ կեանքը ինքը , նկատեց աղան ժպտելով :

— Ա՛ , ո՞չ ըսաւ ձեզի այդ անմիա Փոսզը . ո՛չ . անիմաստ յիմարութիւնը ապրիլ չզրեանայն է միայն . ու ամենախոչոր յիմարութիւնն ալ յիմարութիւններ ընելէ խուսափելը :

— Նորէն իրաւունք ունիք :

Պատասխանեց աղան իրիւ հեզնելու համար , բայց իր կամքին հակառակ պատասխանը պէտք եղածէն աւելի լուրջ հնչեց . Մտածկոտ հետացաւ խաղի սեղանէն ու ձեռքերը մէջքէն կապած իջաւ պարտէզ :

« Փորձուած մարդուն խօսքերը տակն ու վրայ ու պարարտ հողի մէջ էին ինկած :

Ներսը քիչ մը առին լուռ խաղը շարունակուեցաւ նորէն, մինչեւ Օհաննէս յանկարծ խօսք առաւ թուղթ մը ամուր սեղանին զարնելով .

— Հապճ, պարոն Ռէնեակ, մենք զրկեցինք, որ մարդ դառնայ . ան գնաց գիտուես փիլիսոփայ կորեցաւ : Փիլիսոփայ — սո՛ւղ ապրանք . վրաս ամստկանն եօթէն ութը ոսկի է նստեր . շարունակ, եօթէն ութը տարի : սո՛ւղ, սո՛ւղ ապրանք այդ փիլիսոփայութիւնը :

— Բայց ինչո՞ւ թողուցիք . չէ՞ որ առաջ կարծեմ կ'ըսէիք թէ բժիշկ պիտի ըլլայ :

— Բժիշկ չեղաւ . ըսինք, հոս փողոցը թափւած բժիշկներ լեցուն են . հիմա բժշկութենէն ալ խեր չի կայ : Վերջը մտածեցինք ձեռք իր խելքին . հոս գար լինչ ընէր . հրապարակը այսպէս, մէջտեղը դործ չի կայ : Յետոյ լսածիս նայելով փրօֆէսէօրները դէչ ամսական չին ոտոնար . թո՛ղ առաջ երթայ . վերջնայէս մեր անունին ալ պատիւ մըն է :


— Այո՛, ի հարկէ՛ . Երկու հարիւր յիսուն . կցեց Քրանսացին անտարբեր՝ քանի մը թուղթ սեղանին վրայ թափելով :

— Արդէ՛ն, նորէ՛ն սկսանք :

— Երկու հարիւր յիսուն մըն ալ . կրկնեց մարդը ժպտուն՝ թուղթ մըն ալ նետելով :

Օհաննէս խոժոռեցաւ, ու կեղբոնացաւ խաղին վրայ :

(Շարունակելի)



Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ջ Ի Ի Ն Ն

Ի Կ Ո Ի Ն Տ - Կ Ա Տ Ա Ր

Յ . Գ . Մ .



ՌԱՋԻՆ ձիւնը, եւ Սեպտեմբերի մէջ, ու հինգամսայ տապաղին երաչտութենէ մը ետեւ, անձանօթ կատարի մը վրան, հրաշալէպերով ծրարուած վանքի մը ճամբան . հրաշալի բան չէ . . .

Եթէ չըլլար երկինքը՝ կրօնքի ու յաւիտեանի գաղափարը չպիտի ունենային մարդիկ . եթէ չըլլար ծովը՝ մեծ ու հանդարտ՝ չպիտի ունենայինք զօրութեան գաղափար . ու եթէ չըլլային լեռները՝ ոչ պարզ վսեմին եւ ոչ պաշտամունքի գաղափարը պիտի ունենայինք, մենք մարդիկս :

Լեռները, թանձր վտեմները, որք պահած են՝ ծովուն պէս՝ իրենց սկզբնական զեղեցկութիւնը, ստեղծագործութեան առաջին օրուան զեղեցկութիւնը :

* * *

Վարազայ խաչին առտուն էր, կը յիշեմ այսօրուան պէս . նորէն այդ յեղյեղեալ Արմաշի վանքն էինք :

Եւ վանական մեյամազձ զուարթութեամբ սկսած էինք պատարագ մը, ուր առաւ ձեւերու մէջ թուէր կար նսեւ առաւ հոգի :

Քարոզէն ետեւ՝ ազան Երկինքն է սկսաւ խոժոռիլ, բոլորովին անակնկալ խոժոռութիւն մը :

Որոտաղին փոթորիկ մը՝ կը մտրակեր չորս կողմէն քառաթեւ չէնքը Եկեղեցին : Որ ճիշդ երբ կը սկսէինք Յամնայնի օրհնեալ

ես Տէրը», օրհնեալ անձրեւ մը տուաւ զուարթ հոկայ շառաչուն ծայր մը, որ ձեռնց մեզ երեք օր անընդհատ :

Երեք լոյժ օրեր ստիպուեցանք փակուիլ վանական այդ գեղջուկ բանտին մէջ . երեք լոյն օրեր անընդհատ տեղւոյն օրհնեալ յոյս անձրեւը « Յամենայնի օրհնեալին » ամէնէն օրհնեալ պարգեւը : Խորխոշած , մոխիր գարձած , ծարաւի երկիրը առատօրէն ըմպեց զայն , ու խայտայ մշակին սիրաւ :

* * *

Այդ եռօրեայ բանտումի միջոցին՝ շահեկան ընթերցանութիւններ ու խօսակցութիւններ մտայուցին քաղաքն ու իր կցորդները : Ամպը ծածկած էր մեր աչքէն ամէն երկնային բան որ կրօնք կը բռնէ՝ բաց ի մեր խաչէն եւ գրքերէն , որոնցմով կ'ազօթէինք ու կը խորհէինք . ու վայրի անձրեւը կը ներգաշնակէր մեր անապատական ժամերը :

Կոյին ուխտաւորներ ալ , որ յանկարծակիի եկած այդ ողորումէն՝ մատնուած էին անպատրաստ կացութեան մը , ուր կրօնաստեանիչ անպատրուակ ինչ որ պարզութիւն է անարուեստ : Բնութիւնն եւ գեղեցկութիւնն անտկնկաներու մէջ է :

* * *

Երրորդ առտուն կանխած էի եւ դուրս ելած վանական խռցէս , ուր դեռ կը քնէր յոգնած ասպնջականս վարդապետը , խելքի եւ վարպետութեան մրցանակաւոր մը :

Հորիզոնը բաւական լայնցած էր ու անձրեւը դադրած . աչքս հարաւի պատուհաններէն երկինք յառելու ատեն՝ ամպի ձեղքուածքէ մը ճառագայթող աչի մը հուժկու լուսովը նշմարեցի հեռուն , գօտեւորիալ հորիզոնին վրայ պսակուած կատար մը՝ փողփողուն՝ սուրբ լուսողէն սպիտակութեամբ : Բոլորի մրկած բլուրներուն վրայ ձիւնափառ սրբութեամբ ժպտող կատար մը , որ ամէնէն մօտն էր երկինքին ու երկինքի գոյնին :

Երազ մը չէր , ոչ մալորաբանութիւն մը եւ ոչ ալ ամպային երևոյթ մը , այլ իրական արամ պատաստ մըն էր ձիւնի՝ որ գահած էր այդ բացառիկ սարին գագաթը ,

հանրական ջրողջին մէջ ձիւնէ փակադիծ մը բանալով բնութեան այդ բարձր էջին վրայ :

* * *

Այդ նախկին ձիւնն՝ ես մինակ տեսած ու հրաշքած՝ երբ կը դիւէի , մօտեցաւ ինծի՝ վանքին հինաւուրց վարդապետը , որ ունէր շուրջ երկիրին զիտութիւնը « Ի Լիբանանէ մինչեւ ցղոպան որ յորմն ելանէ » եւ ինք ալ նշմարելով հորիզոնի այդ սպիտակ գնտակը՝ ցնծալով աղաղակեց , « Հա՛ , քէլթէփէն , կուսուկատարն է » :

« Քէլթէփէն , կուսուկատարը՝ զոչեցին միւս հասնողներն ալ . հա՛ , ան է , ձիւն հագեր է , ու՛ շատ ալ կանուխ . հագեր է իր մուշտակը : Հրա՛շք է , նշան է , Ձիւն է ինկեր՝ Վարդապետ Խաչին . երկինքի ձերմակ վարպէ որ ինչեք է այդ ճաղատ ձերին վրայ . . . »

« Այս սարի Ձմեռ չունինք . . . » եւ այդ կարգի պարզամիտ այլաբանութիւններ :

* * *

Չորրորդ օրը ճամբայ կ'ելնենք տղմուտ ճամբէ ու խոնաւուտ օդով մը : Այս անգամ սեռուկ ճգնաւոր անասուններ՝ զոմէջներն են , որ ժամանակին չոպեպինդ արագութեան ի հեճուկս՝ իրենց ճոնչաւոր երկայնամիտ դանդաղութեամբը կ'ազատեն մեզ բնութեան ցիխտա վարմերէն . այդ չորքտանի ճգնաւորներուն մէջ կան ջոջեր՝ որոնց վիզը կը կըէ կոջնակի մեծութեամբ դանգակներ եւ անոնց կղջիւրներուն վրայ կրնան ապաշխարել զոյգ մը վարդապետ , այնքան անմեղ ու հանդիսաւոր մեծեր մըն են այդ լայն սեւերը :

Հինգ վեց ժամէն կը հասնինք՝ վարդապետ աշխարհական՝ ընդ ամէնն հինգ հոգի զէմ յանդիման ձիւնփառ կուսուկատարին , որ աւելի մօտէն՝ հազած կը թուի աւելի վեհ պարզութիւն մը , եւ իր զուարթ ստորտները կիտուածի պէս բանուած կը ծփան քանի մը կոկ դիւզեր . ու կատարն՝ այն խորհրդաւոր կատարը , պսակածեւ խորացած , կ'առնէ լոյս համեմատութիւններ վաւ երկինքի մը լուսցուած թեւերուն տակ :

Հոն կ'իմանանք որ սանկ լեռ մը չէ եւ

զեր՝ լի եւ անխօս անհունին ձայնատար
այդ հուն լեւը :

* * *

Երկրաչափական քաղուածով մը ձեւուած
իր կատարը՝ որ ճշգրտովոր չըջանակ մըն ալ է
եւ չունի անհարթութիւն , այլ անշեղ ու
անխառն ծանրութեամբ կը հանդիս իր հսկայ
պատուանգամ-լեռան վրայ՝ կը փայլէր յան-
դուզն եւ հեռուոր բարձրութեան մը մէջ՝ իր
այդ նորանշան պատմութեանին ներքեւ : Ի՛նք
էր որ միշտ առաջին համայնները կուտար
բարձր արեւին , եւ ի՛նքն էր որ առաջին
բղձակաթ համայններ կ'առնէր ուխտաւոր-
ներուն խոճարն աչքերէն :

Մենք ալ՝ քիչ շատ խոճարն ակնածու-
թեամբ ողջունեցինք զինքը :

Եւ մեծաւոր վարդապետն ալ խելք ըրու-
յաւէրժացնել մեր յիշատակն իրեն հետ՝ հա-
նել աւելով հոն մեր խուճարն լուսանկարը :

* * *

Վարդապետները շատ լուսանկարներ
հանած էին . այլ ես առան եւ հինգ տարի է
չէի կրցած մօտիկ մտպական տուփին : Չկոր-
ցայ մերժել այդ անկարծ առաջարկը : Սեբաս-
տացի ճարպիկ լուսանկարիչն ալ պատրաս-
տած էր իր գործիքը : Կը պակսէր մեզի
բարձր հայեցակէտ մը , այդ ալ հայթայթեց
մեզի Կուշու-կատարը :

Ու երկու վարդապետ ու երեք աշխար-
հական՝ աշուրնիս յառած այդ ձիւնազգեաց
կատարին ու միառընիս՝ Ամենակատարին
քաշել տուինք մեր լոյս նկարը :

Լուսանկարիչը գործեց սակայն մեծ սխալ
մը , չկրցաւ առնուլ իր աախտակին մէջ
Կուշու-կատարը՝ թերեւս անպարագրելին՝
ալ , որ նա՛ հոն՝ Նիկոմիդիայէն երկու երեք
ժամ ներսը կսպասէ վեհարար՝ թառած ամ-
պերու , շանթերու , արժիւններու եւ ազօթք-
ներու մթնոլորտի մը մէջ :

* * *

Լեռնէրը , ինչ մօտիկ վտեմներ են լեռ-
ները , լեռները , որ ամէնէն սուր աչքերով
կը նային հարկունին , ամէնէն սուր կրկի-
ղածութեամբ ընկալուչ կըլլան բնական ու
քերթնական նշաններուն : Լեռնէրը՝ պաշա-
տունք են լեռները , լեռնէրը՝ ես շատ տեսած
եմ անոնք , ինչպ ո լեռնածեւ այիքը . լեռնէրն ,
որոնց կը պատկանի Սինան , որ մէ օրէնք
բղխեցան , եւ Գողգոթան , ուրիշ Ալր իջաւ :

* * *

Ես տեսած ալ էի՝ մանուսանց մեծ ուխ-
տաւորի մը աչքովը՝ Լիբանաններու ափնա-
ծիր մասը , այն վեհ ձերմակները , որ կը
գօտեւորեն Պաղեստինը ու վեր կը բռնեն
Սաղմոսն հին ու նոր Կտակարանները , վեր
իրենց կատարներէն ալ , Երկինքէն ի վեր :

Հոն կրօնք մը վակ , կրօնք մը դրական
աշխարհակալած էր ներսս՝ երբայական այդ
սպիտակ հսկաներուն հանդէպ :

* * *

Իսկ հոս՝ ի Կուշու-կատար , Սրմաչի այդ
մանուկ լիբանանեակին յանդիման , ուր այս
տարի հիւսած էր այդպէս բնութիւնն իր ա-
ռաջին հրաշքը , ուր տեսանք մենք առաջին
ձիւնն՝ ամենէն սպիտակը ու նորը որ կար
այս տարի տիեզերքին մէջ եւ ամէնէն մա-
քուրն արեգակին տակ՝ համակ կրօնք մը
բնական փրկապետեց վրաս , կրօնք մը
սուրը՝ սպիտակին պէս որ կը փողփողէր եւ
առընջեան պէս որ կ'երեւցունէր :

Մենք սուրբ աչքերով նայեցանք այդ
սուրբ կատարին՝ մինչ արեւն իր ամենասուրբ
ճառագայթներովը կը հեղուր մտքական ա-
պակիին վրայ մեր լոյս նկարը :

Որպէս զի այդ մշտնջենական կատարին
եւ մեզի ուղեկից Կատարեալին հետ քիչ մը
աւելի յամէ հոս մեր ալ յիշատակը :

Ք Ա Ն Ե Ր

Ս Կ Ե Պ Տ Ի Կ



Մտայտկանութիւնը առանձին անհատներու քով միայն կը զբաղուի . հանրային կարծիք մը միշտ անմիտ է . բազմութեան ձայնը Աստուծոյ ձայնը կոչուած է , մինչ Աստուծոյ կամքը առանձին անհատներու միջոցաւ յայտնուած է միշտ :

* * * Այն տեսակ ժամանակի մը մէջ կ'ապրինք , ուր ամեն ոք գրեթէ իր նախաձային հետ կամ անմիջապէս վերջը կ'ստանայ օրուան մամուլի ձեւին տակ բօսսիօն մը հանրային կարծիք , որուն վարիչները միայն քանի մը ետեւորուի անձեր են : Ամենօրեայ մամուլը միջոցաւ քիչերու համուզումները եւ կարծիքներն են , որոնք հանրութեան մտքին մէջ կը ներարկուին . սոսր հետեւանքն է որ առանձին անհատները ամեն բան , պատրաստ մտածուած վիճակի մէջ գտնելով , չմտածելու ունակութիւնը կը ստանան : Այս պատճառ ամեն օրագիր կարգացողներու կը յանձնարարենք որ թերթերու մէջ օրուան լուրերը միայն կարգան , մնացածին վրայէն ցատկելով :

* * * Մարդկային լիզուի մէջ տկարներու կամքի սյօր , յամառութիւն կը կրչենք , մինչդեռ զօրաւորներունը նկարագիր :

* * * Մեր մէջ տիրապետող կրթութեան իբր սկզբունք ընդունուած է , ոչ թէ շատ բան կարենալը , այլ շատ բան գիտնալը : Կարենալը ոչ թէ միայն անհատի մը բարգաւաճելու ընդունակութիւնը կը նշանակէ , այլ նաեւ կը ցուցնէ իր մտաւոր արժէքը :

* * * Անհատի մը կողմէ երբեմն երբեմն առանձնանալու համար յայտնուած սէրը կը ցուցնէ թէ այդ անհատը ներքին կեանք մըն ալ


ունի : Ով որ չի սիրեր առանձնութիւնը , կը նշանակէ թէ ինքզինքին հետ ներդաշնակ կացութեան մը մէջ չի գտնուիր :

* * * Իւրաքանչիւր ճշմարիտ արուեստագէտ՝ կ'աշխատի միայն իր անձին ու իրեն համակարծիք ու միեւնոյն զգացումները ունեցող բարեկամներու համար : Այն արուեստագէտները որոնք առանձին ճաշակ մը չունին , այլ հանրութեան օրհանջներուն կը հետեւին , կը նմանին այն կիներուն որոնք տէր մը չունին ու ամենունն ալ են :

* * * Արեւակցութիւնը հաստատ յօդ մը չէ անձերը իրար կողպող : Միայն մտածման եւ զգացումներու նոյնութիւնն է որ անհատները իրարու մէջ կը ձուլէ : Մտաւորական կեանքի բոլոր մասերուն մէջ մեծ ընտանիքներ կան , որոնք անդամները ձեռքի պղծակ շարժուածով մը իրար կը հասկնան . ինչպէս արուեստագէտները , գիտնականները եւ քսակահատները :

* * * Որքան որ անհատ մը տկար ըլլայ այնքան պէտք ունի ուրիշներու ընկերակցութեան . զօրաւոր եղնիկները միշտ առանձին կը պտտին :

* * * Գեղարուեստներու մէջ աչքը սուկի կ'արժէ քան թէ ձեռքը : Գեղապաշտ (dilettante) մը կ'ըսէ . «Ամեն բան կատարեալ ճշտութեամբ կ'տեսնեմ , բայց միայն միեւնոյնը ես ալ չեմ կրնար ընել » : Այսպէս ըսող մը սպանովապէս կը սխալի թէ ճշգորէն կը տեսնէ եւ կրնայ իր բոլոր ճիշդ տեսածները քովէ քով բերելով ամբողջութիւնը կազմել , նկարչութեան գեղապաշտ մը թող փորձէ , օրինակի համար , ձիու մը մարմնին արտաքին գիծերը իրարու քով շարուած կէտերով զայն մեզ ներկայացնելու , ու այն ատեն միայն պիտի համոզուի թէ ինչպէս բոլոր կէտերն ալ սխալ տեղեր դրուած են :



ԻՐԻԿՈՒԱՆ ՊԱՇՆԱԿՈՒՄՆԵՐ

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՌ

Թարգմ. Ս Ի Պ Ի Լ



ՅԱ՛ ժամն ուր ծիլին վրայ բրբրումն՝
 Ամէն ծաղիկ խունկ կը բուրէ գեթ բուրվառ.
 Ձայճեր , բոյրեր շրջան կ'ընեն օդապար .
 Թախճոս շրջպար եւ հեշտագի՛ն բաղկութիւն :

Ամէն ծաղիկ խունկ կը բուրէ գեթ բուրվառ .
 Յաւած սրբոյ պէս ջուրակն է սարսրումն .
 Թախճո՛ս շրջպար եւ հեշտագի՛ն բաղկութիւն .
 Երկինք շիրմի պէս չընկող է եւ խաւար :

Յաւած սրբոյ պէս ջուրակն է սարսրումն .
 Քրննուշ սիրտ մ'որ կ'ատէ մրուայ մահն անճա՛յր .
 Երկինք շիրմի պէս չընկող է եւ խաւար .
 Սառ արեան մէջ սուգած է գունտն արեւուն . . .

Քրննուշ սիրտ մ'որ կ'ատէ մրուայ մահն անճա՛յր ,
 Կը հաւաքէ յոյս անցեալին հետն համբուն .
 Սառ արեան մէջ սուգած է գունտն արեւուն . . .
 Սուրբ ճահանջ մ'է՛ է քու յիշատակդ ինձ համար :



Կ Ո Ր Ս Ո Ւ Մ Ծ


ՍՏԵՓԱՆ ՔԱՐԲՈՒԹԵԱՆ

Հիւրեղ ու մատղաշ նիւղը կ'արբրենայ ,
Յօդ-երագներու բեռին տակ բերե՛ւ . . .
— Կեանքի լուռ պատռոտ մը որուն վրայ ,
Գիշերի երգերն կը հանգչին անբու :

Մրտէ լոյս մարմնով , փրփօշ ու փափուկ ,
Նարածին բեռոցն ուժին անգիտակ ,
Հրմայլէ հիւսուած փետուրներով խունկ ,
Թռչուն մը բառիկ կու գայ հան շիտակ :

Թեւաբախումին տակ անոր մախար ,
Գեղին կը բափին ցօղերը , երգե՛ր . . .
Հողն գանձնէ կ'ուտէ ախարժով մը հուր ,
Կ'անճեաի քրոջունն . . . ու նիւղն է կէր :

Երագ-երգերը , հոգիներու ցօղ ,
Իրենց լուռ ու վարդ կեանքը չապրած դեռ ,
Աղջկան մ'աչկերու դիւրումէն ցրեցող ,
Կը բափին , կ'իյնան , կորսուած երգեր :





Կ Ն Ո Ջ Գ Ե Ղ Ե Ց Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տ Ի Թ. Գ Ս Ի Թ Ե Ա Ն



ՁՈՅՆԵՐՈՒ և արտաքին ձեւերու համեմատութեանց ներդաշնակութեանը ու դէմքին զօրաւոր, բնական արտայայտութեան մէջ է ուր կը գտնուին արուեստագէտին համար Գեղեցկին տարբերները: Նկարիչ մը կամ արձանագործ մը, գեղեցկին աննիւթական ցոլքերովը ու զոյուած ու բնութեան խորին իմաստասիրութեամբը հմայուած, երբ իր երեւակայութեանը միջոցաւ մարմին կու տայ Գեղեցկին, ատով բոլորովին տարբեր գործ մը կը կատարէ, քան թէ անոնք, որոնք առողջապահի տեսակէտով մարմնին արտաքինէն ներս, կեանքի խորհրդաւոր երեւոյթներուն ծանօթ, տարբեր կերպով կ'ըմբռնեն Գեղեցիկը:

Բնախօսները, ինչպէս նաեւ առողջաբանները, անհատի մը գործարանաւորութեան մէջ տեղի ունեցող կանոնաւոր (normal) գործողութեանց կատարուելուն հանդէպ կը տեսնեն գործարանաւորութեան առողջութիւնը, որուն մէջն է իրենց համար իւրաքանչիւր գործարանաւոր կազմուածքի գեղեցկութիւնը:

Գեղեցկի մասին առողջապահի և արուեստագէտի ըմբռնումը և ճաշակը թէեւ արտաքուստ այնքան տարբեր կը թուին ըլլալ իրարմէ, սակայն երբ լուրջ կերպով ձեռնարկենք Գեղեցիկը տարբարութեամբ, պիտի տեսնենք թէ կան կէտեր որոնք ընդհանուր են Գեղեցիկը առողջ կերպով ըմբռնող ամեն դասակարգի մարդոց համար:

Գարավերջիկ Գեղեցկութեան մը ըմբռնումէն դուրս, որով հիւժուովին իսկ ի յակճիւ, անկապաշտներու եւ տպաւորականներու երամակներ կը կարծեն գեղեցիկ տեսարանի մը վայելքները ունենալ, դասական առողջ աշխարհ մը այսօր կնոջական գեղեցկութեան իբր հիմ կ'ընդունի անոր առողջութիւնը: Անկարելի է որ Միլոյի Վէնէսը կերտուած ատեն արձանագործը իր աչքին առջեւ կամ մտքին մէջ վտիտ ու տխեղդ կին մը իրեն իբր իտէպ ունենայ: Եւրոպական Տիւզներու մէջ հին թէ նոր նշանաւոր արուեստագէտներու կնոջական նկարներն ու արձանները ցոյց կու տան թէ միշտ առոյգ ու բարձեւ կիներն են որոնք մեծ արուեստագէտներու գլուխ գործոցներուն ներ-

չնչարանները եղած են, ու գիտութեամբ կրնանք հաստատել այսօր թէ առողջ կիները միայն կրնան առողջ ու բարեձեւ ըլլալ:

Բայց ըլլան թերեւս հարցնողներ թէ կնոջ մը համար միթէ առաքինութիւն (vertue) մըն է առողջ ու բարեձեւ ըլլալ: Անոնք որ գիտնականի մը լրջութեամբ կեանքի ու անոր երեւոյթներուն խորհուրդները լուրջ քննութեան մը կ'ենթարկեն, և ամէն բանի փոխանակ պատճառը թեթեւօրէն ուսումնասիրելու կը մխրճին աշխատութիւններու մէջ ամեն բանի «ինչպէս» և «ինչու» գտնելու համար, այդ անձերը ամէնքն ալ, հակառակ բարոյախօսներուն ու հակառակ ֆեմինիստներուն, որոնք բնութեան պատճառական (causale) օրէնքներուն հեղինակութիւնը չեն ընդունիր, պիտի պնդեն թէ գեղեցկութիւնը կեանքի յեղաշրջման գլխաւոր միջոցը պիտի մնայ միշտ, ու կիներ ալ իր բնախօսական կոչումովը գեղեցկութիւնը պիտի ունենայ միշտ, իր տիրութեան իբր ամէնէն ազդու միջոցներէն մէկը գործածելու:

Կինը իր բարոյական հեղինակութեանը միայնելով նաեւ գեղեցկութիւնը, որուն համար սիրով մը կը ծնինք ամէնքս ալ, կրցած է ժամանակակից ընկերութիւններու մէջ քաղաքակրթիչ մեծագոյն դերերէն մէկը խաղալ: Քաղաքականութեան պատմութեան մէջ ալ կը տեսնենք թէ նոյն իսկ բարբարոս ժողովուրդներու մէջ, ուր ֆիզիքական ուժը իբր գերագոյն առաքինութիւն մը գնահատուած է, կինը իր մկաններու ակարութեամբ թէև մարդուն սարուկը, բայց կրցած է իր գոյութիւնն ու դիրքը պահպանել, ու նաև ազդեցութիւն մը ունենալ մարդուն վրայ, անոր խտտութիւնը ակարացնելով:

Ինչպէս որ մեր օրերու մարդուն կու-

չումը աւելի բարձր ու բազմակողմանի դարձած է քան թէ նախապատմական մարդունը, նմանապէս կնոջ կոչումն ալ հետեւանք քաղաքակրթական պահանջներու՝ հարկաւ այլ եւս չի սահմանափակուիր առնական դաժանութիւնը ազատելու, հաշմելու մէջ: Ինքը իբրեւ կին (բառին բովանդակ նշանակութեամբ) աւելի մեծ քաղաքակրթական դերեր ալ ունի կատարելու: Եւ որպէս զի իր այդ դերերուն մէջ չթերանայ, պէտք է որ անիկա ներկայանայ մեզի իր բովանդակ առաքինութիւններով, որոնց գլխաւորներէն մէկն ալ է իր գեղեցկութիւնը: Մեր ժամանակին, ուր մասուր և ընկերական ամէնէն չահեկան ուսումնասիրութիւնները կը կատարուին, դիտուած է որ այն ազգերը, որոնց մէջ գեղեցիկ կիները շատ աւելի են, ունին աւելի ազնիւ և հաճոյական նկարագիր մը: Կնոջ գեղեցկութիւնը ոչ թէ միայն ֆիզիքական առաւելութիւն մըն է, այլ ունի նաեւ իր ընկերական, բարոյական բարերար հետեւանքները:

Կնոջ համար էական պայման մըն է որ ուրիշ առաւելութիւններու հետ նաև գեղեցիկ ըլլայ. և գեղեցիկ ըլլալու համար անհրաժեշտ է որ կին մը ամէն բանէ առաջ առողջ ըլլայ:

Ինչպէս սկիզբէն ալ շեշտեցինք, գեղեցկութեան հիմը մեզի համար միշտ առողջութիւնն է, և ոչ թէ շարժումով ձեւք անցուած անբնական սեթեւեթները, որոնք ազեղ են և հակաառողջապահական:

Այս ասոցերը սակայն թող չսխալեցնեն մեր ազնիւ ընթերցող հիմները. քանի որ բնութիւնը իր պարզեւնելուն մէջ հաւասարութեան սկզբունքը բնաւ չ'ընդունիր: Պէտք է դիտնալ թէ առողջապահական բազմակողմանի օրէնքներու գործադրութեամբ՝ ոչ-գեղեցիկներն ալ կրնան հաճոյալի դառնալ, ինչ որ գեղեցկութեան յայտարար նշանն է:

Ինչպէս ընկերութիւններու մէջ, նմա- նապէս բնութենէն ալ կան անժառանգ- ներ, որոնք ժառանգական կամ դիպ- ուածական հիւանդութեան մը հետե- ւանքով տկարացած են կամ հաշման- դամ: Իսկ ասոնցմէ դուրս, որոնք ամէն տեղ փոքրամասնութիւն մը միայն կը կազմեն, կան ահագին երամակներ կի- ներու, որոնք իրենց առողջապահական օրէնքներու մասին ունեցած ազիտու- թեամբ շղային տազնապներու, անար- իւնութեան դատապարտուած էակներ են, զուրկ իրենց դէմքին վրայ գեղեց- կութեան արտայայտութենէ, և որոնք գեղեցիկ կիներ կրնային ըլլալ եթէ ա- ուող ըլլային: Ու նորէն որքա՞ն գեղե- ցիկ կիներ կան, որոնք հակառողջապա- հիկ կենցաղով մը հետզհետէ խամրած, տգեղցած են:

Եթէ կնոջ գեղեցկութիւնը՝ մանա- ւանդ իր առողջութեանը մէջ կ'ուզենք տեսնել, չկարծուի սակայն որ մեր իտէարն է Հռովմէացի կամ Սպարտացի կնոջ մը տիպարը, որոնց գլխաւոր ա- ուաքինութիւններն էին մկաններու կո- ըրով մը, մարմնական գեղ ու հրապոյր: Մեր դարուն համար, միայն այդ տեսակ աուաքինութիւններով կին մը շատ ձա- խորդ էակ մը պիտի ըլլար՝ անկարող իր ընկերական մեծ դերը կատարելու: Ժամանակակից կինը՝ մտաւորական զարգացում ու բարոյական կորով պէտք է ունենայ, որոնց միանալով նաեւ մարմնական առողջութիւնը՝ պիտի կազ- մէր մեզի համար ճշմարիտ իտէալ, գե- ղեցիկ կինը:

Այս կէտը Եւրոպայի կիներու շա- տերէն ալ սխալ հասկցուած է: Ժամա- նակակից մտաւոր զարգացումով կնոջ

մը համար պատճառ մը չի կայ որ դա- րավերջիկ ըղձանքով մը արհամարհէ մարմնական առողջութիւնը, և ջիղերու տարապայման դրգիւռի մը մէջ հարած ու մաշած, իր քայքայուած առողջու- թեամբ մարմինն հրապոյրները զգեսու- ներու ճոխութեան մը մէջ փակել ուզե- լով, սլուարկիկ մը երեւոյթը սասանայ:

Կինը ամէն բանէ առաջ իբր ամուսին և իբր մայր մեծ կոչում մը ունի մարդ- կային ընկերութեան մէջ, և որպէս զի իր այդ կոչումը անթերի կերպով կա- ըրող ըլլայ կատարել, անհրաժեշտ կեր- պով պէտք ունի առողջութեան:

Կնոջ գեղեցկութեան մասին մեր այս ընդհանուր տեսութեամբ նպատակ ու- նէինք շեշտել ամէնէն աւելի այն կէտը թէ ինչպէ՞ս երբ կին մը ժառանգական և կամ դիպուածական որ և է հիւան- դութենէ մը յառաջ եկած թերութիւն մը չունի և առողջ է, ու գիտէ իր ա- ուողջութիւնը իննամե՞լ կրնայ ապահով ըլլալ թէ իրմէ պահանջուած գեղեց- կութիւնը արդէն ունի: Միայն, որպէս զի ինքը կատարեալ անհատ մը ըլլայ, պէտք ունի ճշմարիտ, առողջ դաստի- արակութեան, պարզ հոգիի մը, ճաշա- կաւոր երեւալու տաղանդին ու բնական և շնորհալի շարժումներու:

Ուրիշներու ձգելով կիներու բոլոր բարոյական առաւելութիւնները ի վեր հանել. ես պիտի ջանամ յառաջիկային «Մասիս»-ի ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՀ օգտակար բաժնին տակ ցուցնել թէ ինչ առողջա- պահական միջոցներ կան, որոնցմով կինը իր գեղեցկութիւնը կարող պիտի ըլլայ ձեռք անցընել ու յետոյ պահպանել զայն:

ԺԱՆՆՅՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԷՋ

Ն Ա Ր Կ Ի Ս



ՄԱՆՆԱԻՈՐ, հաճոյալի ժամանց մը, ընկերական զբօսանք մը, միշտ հոգեկան վախճան մըն է մարդոց համար : Ամեն ժամանակի մէջ եւ ամեն տեղ զբօսանքը մարդոց սաղաւակներուն փարատողը եղած է, եւ մարդիկ այնքան սիրած են զբօսանքը որքան կեանքը իր հոգեբով իրենց բովանդակ ոյժը պահանջած է : Ամենէն գէշ կերպով զբօսնող հասարակութիւնները եղած են միշտ գէշ աշխատողներ, եւ անոնք որոնք գործունեայ, արդիւնաւոր կեանք մը ունին, գիտցած են նաեւ բանաւոր զբօսանքներու ամբողջ կազմակերպութիւն մը ունենալ :

Մարդկային զբօսանքներու ատեն, մանաւանդ կինը ամենէն կարեւոր դերը ունեցած է նախապատմական ժողովուրդներու կեանքին մէջ, եւ քաղաքակիրթ ընկերութիւններն ալ այսօր կինը կը նկատեն իբր ամենէն կարեւորը իր այդ դերովը : Մեր դարուն ընկերական կազմակերպութեամբը, ընտանիքները ամէն տեղ ամբողջութիւն մը կը ներկայացնեն որոնք իրենցմէ դուրս արտաքին աշխարհի վրայ մեծագոյն ազդեցութիւնը ունին : Ընկերութեան մը ամեն անհատներն ալ ընտանիքի մը մէջէն ծագում կ'առնեն, ու իրենց յոգնաւատակ կեանքի վերջին հանգրուանն ալ միշտ ընտանիքն է : Պէտք է ուրեմն ընտանիքը այն բոլոր յատկութիւնները ունենայ որոնցմով կ'ուզենք որ մարդկային ընկերութիւն մը օժտուած ըլլայ : Հաստատուած ճշմարտութիւն մըն է թէ այն մարդիկ որոնք ինքզինքնին աւելի ընտանեկան ժամանցներու տուած են, բնաւորութեամբ շատ աւելի հեզ ու ազնիւ կ'ըլլան, քան թէ անոնք որոնք գազիմօծներու եւ խանութներու մէջ կ'ուզեն իրենց պարապի ժամանակը սպաննել :

Ընդհանրապէս թէեւ կարծուած է թէ

կինը աւելի կրաւորական էակ մըն է քան թէ մարդը, բայց ըմբռնման տէր ու շիք կիներու հանդէպ ես ճիշտ հակառակ համոզումը ունիմ : Այս վերջիններն են որոնք կրնան իրենց ուղած կերպով ձեւափոխել մարդը, ու նոյն իսկ մարդոց կատարած գործերուն մէջ կնոջ կամքն է յաճախ որ կ'իրագործուի : որքան ճշմարիտ եւ հոգեբանական է Քրանսացիներուն «Cherchez la Femme»ը :

* * *

Այրերը արդէն իրենց կոչումով օրուան միջոցին պէտք է ընտանեկան յարկէն դուրս ըլլան, իսկ ստոր փոխարէն, որպէս զի այրերը իբր իրենց կիներուն ընկերակից չօտարանան իրենց ընտանեկան յարկէն, պէտք է որ իրենց զբօսանքի ժամերն ալ ընտանեկան յարկէն դուրս չանցընեն : Կինը իր ընտանեկան յարկը իրմով եւ զաւակներով այն տեսակ վիճակի մը մէջ դնելու է, որով իր ամուսինը իր պարապի ժամերը հաճոյքով ուղէ իրեննետուն հետ անցընել : Ինչպէս որ անհաճոյ է երբ մարդը կինը իր գործին բոլոր տաղտուկներովը կը զբաղեցնէ, ու ատով ընտանեկան յարկի հաճոյքները կը պղտորէ, նմանապէս կին մը, իր ամուսինն ներկայութեանը պէտք է մէջտեղէն վերցուցած ըլլայ այն բոլոր բաները որոնք մարդուն տաղտուկ կը պատճառեն : Իսկ ինքը, իբրեւ տանտիրին, պարտաւոր է ամուսնոյն բացակայութիւնը հոգալ այլ բոլորը :

Ես տեսած եմ շատ մը կիներ, որոնք իրիկունները, փոխանակ իրենց ամուսնոյն հետ ընկերակցութեամբ, ժամանակ անցընելու, կ'ուզեն իրենց ամուսնոյն ներկայութիւնէն օգտուելով զաւակներու խընամբը անոր ձգել, իսկ իրենք, տան կառավարութեան հետ կապ ունեցող իրենց գործերովը զբաղի : Այս տեսակ կիները կրնան ապահով ըլլալ որ իրենց ամուսինները կը սկսին կամաց կամաց չսիրել իրենց ընտանեկան յարկը, իբրեւ ամենէն հաճոյալի ժամանակի վայր մը եւ իրենց ազատ ժամերը կ'աշխատին իրենց ընտանիքէն դուրս տեղեր անցընել :

Այն ամուսինները որոնք ընտանեկան յարկին տակ կրնան հաճոյալի կերպով իրենց

ժամանակը անցրնել , երջանիկ ամուսիններ են անոնք , ուրեմն կիները մեծ ոյժ մը ունին ձեռքերին , իրենց ընտանեկան յարկը երջանիկ կամ գժբազդ ընելու համար : Նորէն կը շէշտեմ այն կէտը թէ ինչպէս որ մարդուն պարտականութիւնն է ընտանիքի մը բովանդակ , նիւթական տաղաւակները տանիլը , նմանապէս կնոջ պարտաւորութիւնն է ընտանեկան յարկը մարդուն հաճելի ընելու բոլոր միջոցներուն վրայ խորհիլը :

Մարդկային հոգին , որ փոփոխամիտ ստեղծուած է , իր զգացումներուն համար միշտ նորանոր գոհացումներ կ'ուզէ , կինը իր ընտանեկան յարկի ժամանցները ամուսնոյն համար հաճոյալի դարձնել ուզած ատեն , պէտք է նաեւ ուշադրութեան արժէ այս ճշմարտութիւնը :

* * *

Մեր ընտանիքներու մէջ ընտանեկան ժամանցներու մասին մեր կիները չեն մտածած անգամ : Այրերը ընտանեկան յարկի մասին միշտ կը դանդափն , ըսելով թէ հոն արդոյ պոռչտուքը , լացը ու կոծը եւ կնոջ ալ տգոհանքները պէտք է մտիկ ընել , եւ շունչ մը կ'առնեն եթէ իրենց շարեկամներէն մէկը ատաջարկէ իրենց զազկնոն երթալ եւ նորտ կամ թուղթ խաղալ :


Ընտանեկան կեանքն ալ զարգացած չէ մեր մէջ ընտանեկան զոյնի տակ , որով բարեկամ , ծանօթ , ազգական ընտանիքներ հաւաքուելով իրապէս հաճոյալի ժամանցներ , երեկոյթներ ունենան :

Հարուստ ընտանիքներու մէջ հաւաքումները բոլորի կամ նման խաղերու համար են ընդհանրապէս , իսկ միջակային դասէն ընտանիքներու մէջ , հաւաքումներու ատեն կիները իրենց մէջ կը սկսին իրենց խօսակցութիւնը , որ իր բովանդակութեամբն ու եզանակիւր որ եւ է շահեկանութենէ զուրկ է մարդուն համար , իսկ մարդիկը , իրենց օրուան գործերուն եւ կամ այն անտակ խնդիրներու մասին կը խօսին , որոնք իրենց կարծիքով կանայքի բարեմտութիւն մտաշելի չեն : Եւ մեր մէջ այս անտակ հաւաքումներուն կուտան ընտանեկան հաւաքումներու անունը :

Մեր ընտանիքներու մէջ , ընդհանրապէս , ոչ առանձին եղած ատեն , ոչ ալ հարաբերութեան ատեն չունինք այն այնքան մտքուր , հաճոյալի եւ անկեղծ ընտանեկան ժամանցները , որոնց համար ուրիշ պայմաններու ծանօթ անհասանելի նախանձով կը նային օտարներու ընտանեկան յարկին եւ գեղեցիկ ընտանեկան ժամանցներ ունենալու յատկութեան :

Այն ատեն պիտի սկսինք մենք ալ ընտանեկան ճշմարիտ ժամանցներ ունենալ , երբ մեր կիները աւելի լրջօրէն զիտակցին իրենց իրքեւ ամուսնիկն ունեցած մեծ պատասխանատուութեանը եւ բազմակողմանի կոչմանը :

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՈՒՂԻՆԵՐՈՒՆ



« Մասիս » ի խմբագրութիւնը փափաքելով որ իր « կանանց աշխարհ » բաժնին տակ յուզուին մեր կիներուն յատուկ ամեն տեսակ խնդիրներ , ու նաեւ մեր զրապէս կիները շատ աւելի ընդարձակ աշխատակցութիւն մը ունենան « Մասիս » ի մէջ իրենց պատկանող բոլոր հարցերուն նկատմամբ , կ'առաջարկէ իր ընթերցողներուն ըսել թէ Ի՞նչ է իրենց խտայը հայ տանտիկնոջ մասին . ուրիշ խօսքով ի՞նչպէս պետք է ըլլայ հայ տանտիկին մը իր գլխաւոր գերերուն մեջ իբրեւ ամուսին եւ իբրեւ մայր :

Մեր ընդունած պատասխաններէն ամենին յաջողին իբր պարզեւ պիտի արուի մէկ տարուան « Մասիս » , զրոգին կամ զրոգին հրամանով անուան մը յտակացնելով զայն :

ՊԱՏՇՇԳԱՄԻՆ ԱՂՁԻԿԸ

ՅՈՎԼ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

(ԹՊԳՐ)

Կարծես կապոյտ բիւրեղէ անպատ մը մոգակամ
Անծայր , անծովի հարբ ծովը փրոուած է լուռ ու հալուն ,
Ողորկ , անխայր ինչպէս քարս այտերը կոյս աղջրկան ,
Կը ցոյցլայ՝ ցանելով լոյս ժրպխոմներ փալփուն :

Վերը՝ անամպ երկինք մը , լուսածիծաղ ու պայծառ,
Իր կոյս կապոյտ կամաքը կը տարածէ ամէն դի ,
Վրնիս՝ ինչպէս կոյսի մը ջինջ աչերը սիրափառ,
Ծովուն վրայ կը բախէ վառ, հայուածքներ տարփամբի :

Ծովափին կից ցած տուն մը պատշգամին վրայ սեգ
Կապոյտ հագուած աղջիկ մը , գեղանի գերք լուսածիր
Հուր-պարիկ մը՝ պարուբաւած ամպերու մէջ կապտաշէկ ,
Լուռ , միայնակ կանգնած է , խոհերու մէջ մրտացիր .


Ու կը դիտէ հիացած , միշտ անխօսուկ մրտածուն ,
Համատարած , անվողով լայն անհունը կապուտակ ,
Անշարժ յառած աչերուն յակինք կապոյտն ելագուն
Ձինջ երկինքին ու ծովուն կապոյտին մէջ անյատակ :





ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մ. Շ.



ԵՐ մէջ շատ քիչեր, թիւրեւս ոչ ոք մտածած է թէ մանուկները, որոնց ամբողջ գործունէութիւնը եւ դատողութիւնը մեզի համար երեւակայական աշխարհի մը մէջ կը զառնայ, պէտք ունին առաջնորդներու՝ որոնք մանուկին համար կապը պիտի ստեղծեն երեւակայական եւ իրական աշխարհները իրարու յօդող, թէեւ մանկան մը առաջին տարիները հոգւոյ դերազանցապէս երեւակայական գործունէութեան մը մէջ կ'անցնին, սակայն մայր մը, կամ մօրը տեղ բռնող վարժուհին պէտք չէ չափազանց անունդ տան մանուկին երեւակայական հակումներուն։ Մանկան արդէն երեւակայութեան հակամէտ բնաւորութիւնը երբ ուզուէր աւելի երեւակայութիւններով անուշամեղ, տախտակ պիտի նմանէր ճիշդ դիւրագրգիռ եւ արիւննոտ ազու մը ամեն տեսակ համոզմաներով ուժովցած անունդ մը տալուն, որուն հետեւանքը երկու պարագաներուն ալ տղուն համար միայն վնասակարկրնայ ըլլալ։ Այն սղան որ արդէն բնութենէն ունի իրեն անհրաժեշտ եղած երեւակայութիւննե-

րու համար հակում մը, պէտք չի կայ նոր առիթ տալ տղուն՝ երեւակայութիւնը գործունէութեան մէջ դնելու նպատակով։ Ընդհակառակը պէտք է աշխատիլ, երեւակայուածներէն իրականները հետեւցնելով, մանկան դատողութիւնը զարգացնել։

Մանկան հոգեկան աշխարհը հէքեաթներու աշխարհ մըն է. աշխարհի բոլոր երեւոյթները տղուն համար հրաշալիքներ ու հէքեաթներ են, որոյնհետեւ չի ճանչնար այդ բոլոր երեւոյթներուն իրական ըլլալը եւ անոնց պատճառները կ'անպիտանայ, ու միայն կամայ կամայ կը սկսի իր երեւակայութեան աշխարհէն դուրս գտնուած առարկաներու երեւոյթներուն իրական գոյութեանը գիտակցիլ։ Այս տեսակ գիտակցութենէ մը վերջ է միայն որ մանուկը կը սկսի շահագրգռուիլ այդ առարկաներով, որոնք իրեն համար հաճելի կամ անհաճոյ կը սկսին դառնալ։

Մանկան երեւակայելու ձգտումին մօր կողմէ չափազանց քաջալերուելովը տղուն դատողական զարգացումը, իրականին ճանաչողութիւնը, մտածելու եւ դատելու կարողութիւնները կը վնասուին, եւ յառաջակային իրականէն աւելի յոյզերու կեանք մը կու տան անոր, ինչ որ զինքը կ'արգիլէ կեանքի կռուին մէջ յաջողիլ։

Մանուկները իրենց մտաւորական զար-

գայման սկզբնաւորութեանը մէջ կը նմանին ժողովուրդներու, որոնք քաղաքակրթութեան ծագման միջոցին արտաքին բոլոր երեւոյթներէն բանաստեղծական սպաւորութիւն մը կը ստանան ու նոյն սպաւորութիւնները բանաստեղծական կերպով կ'արայայտեն: Ասոր համար է որ բոլոր լեզուներուն նախնական վիճակը բանաստեղծութիւն է: Նմանապէս տղաքն ալ, ինչ որ իր արտաքին սպաւորութիւն կը ստանան կամ կ'արայայտեն ընազգօրէն, բանաստեղծական է: այսինքն մանուկը իր զգացումներն ու մտապատկերները միայն պատկերներով կ'արայայտէ, որովհետեւ միայն պատկերներու միջոցաւ է որ կը հասկնայ այդ ամենը: Մանուկ մը իր առաջին երեք չորս տարիներուն ուրիշ կերպով չըմբռնելու բարին կամ չարը, գեղեցիկը կամ տգեղը, բայց եթէ պատկերներու միջոցաւ, ու երբ իր մայրը չարին կամ գեղեցիկին մասին խօսի, միշտ միտքը կը բերէ այդ գաղափարներու համապատասխանող պատկերները, ու կը սկսի իրեն համար այդ պատկերներէն յառաջ եկող նոր պատկերներ երեւակայել:

Մանկական հոգիին այս բնական վիճակը՝ մանուկներու հետ մեր ամենօրեայ փորձառութենէն կը տեսնենք, երբ անոնք այնքան ուշադրութեամբ, գրեթէ իրենց շունչը զգուցութեամբ առնելով, կը հետեւին մեր պատմութիւններուն, եւ որոնք եթէ լեզու եղեն, առաջին անգամ մենէ կը խնդրեն որ իրենց պատմութիւն մը ըսենք: Բայց եթէ չափէն աւելի գրուենք մանկան այս հակումը, այն ատեն, պէտք է գիտնալ որ խանդարած կ'ըլլանք աղուն խառնուածքին առողջութիւնը:

Մեր մայրերը, գրեթէ ամենքն ալ ընդհանուր սխալ մը ունին, որով իրենց նորատի զաւակացը երեւակայութիւնը պէտք եւ զածէն աւելի վառ կը պահեն, ու չափ ու սահման չեն գիտեր, երբ սկսին իրենց մանուկներուն հէքեաթներ պատմել: Կը գիտակցին արդեօք, թէ ատով իրենց զաւակները թոյլ բնաւորութեան տէր, վախկոտ ու ձեռներ/ցութեան ոգիէն զուրկ սնահամներ կը դառնան ապագային, բան մը ուրկէ այնքան կը ստառապի հիմա մեր հասարակութիւնը: Գլխաւորաբար հարուստ ընտանիքներու մէջ, ուր տղուն խնամքին համար տառաւորներ կը

գտնուին եւ մանուկները գրեթէ ամբողջովին անոնց յանձնուած են, այս վերջինները այնքան երեւակայական պատմութիւններով կը անուցանեն մանկան միտքն ու հոգին, որ անիկայ իր աղագայ կեանքին մէջ անկարող մէկը կը դառնայ բնոյհանրապէս, զուրկ գործունեայ մարդու մը բոլոր առաւելութիւններէն: Երեւակայութեամբ չափազանց անած հոգիի մը տղեղ կ'երեւան հասարակ օրուան լոյսին տակ փայլբիլող իրականութիւնները, ինչ որ պէտք է հաւատալ թէ ընկերական չարիք մըն է, Իրաւ է, պէտք չէ մեր տղաքները զրկենք երեւակայական պատմութիւններու աթթած անպատում ուրախութիւններէն, որոնք մանկական հոգիին համեմտեան են: Ինչպէս որ համեմտեան չափազանց գործածութիւնը մեր ամեն օրուան կերակուրներուն մէջ մեր Ֆիզիքական առողջութեան կրնայ վնասել, նմանապէս հէքեաթներու չափազանց անուեղ մը՝ կը վնասէ մանկան հոգեկան առողջութեանը: Տղան արդէն բնութենէն ունի երեւակայութեան կարողութիւնը, եւ նոյն իսկ այդ երեւակայութիւնը արտաքին, իրական աշխարհին հետ ներդաշնակելու մէջ կը կայանայ մօր մը զաստիարակիչ դերը:

Տղայ մը պէտք չէ որ ուսման թիւը, հրաշքներու աշխարհի մը մէջ ապրի, որ իրական աշխարհի մտապատկերներով չի բացարուիր: Բնութիւնը, իր բոլոր երեւոյթներով արդէն մեծկակ հրաշք մըն է մանկական հոգիին ու մտքին համար, եւ մեր գործը պիտի ըլլայ կամոց կամոց պարզել այդ բոլոր մանկական աչքին, փոխանակ անոր միտքը նոր հրաշքներով բեռնաւորելու:

Ամենէն լաւ միջոցն է, որ տղաքները իրենցմէ դուրս գտնուած ամեն անցած դարձածները հասկնալու համար, անշունչ առարկաներն այն տեսակ յատկութիւններ ըստանան, որոնցմով մանուկը զինքը շրջապատողները, իր ծնողքը երեւակայէ, կենդանիները եւ ծառերը պէտք է որ մանկան իր մօր լեզուովը խօսին: Գրականութիւններու մէջ առակը մեզի այս միջոցները կուտայ: Առակներու միջոցաւ է որ արդէն 4—5 տարեկան եղող տղաքներուն կրնանք խօսիլ բարի ու չար գործերու վրայ, իրականու-

Թեան մասին իրենց ըմբռնումը կրթել, և զիրենք արտաքին աշխարհին հետ յարարե- բերութեան մէջ դնել :

Մայրերը որոշ ուղղութիւն մը պէտք է ունենան իրենց զաւակացը երեւակայական հակումներէն օգտուելով զիրենք կրթելու համար : Մայրերը պէտք է որ ներքին հոգե- կան, արտաքին նիւթսկան խնդիրներով զբաղեցնեն իրենց զաւակացը հոգին և միտ- քը : Պէտք է աշխատիլ որ մանուկներու մէջ իրականութեան դատողութիւնը ու երեւակա- յելու կարողութիւնը, ձեռք ձեռքի, միասին զարգանան :

Բանաստեղծ պատանիները և զգայա- մոլ աղջիկները, որոնք բաղձածուածէն չատ աւելի են մեր մէջ, հետեւանքն են հի.քեաթ- ներով միայն սնած մանկութեան մը :

ՄԵՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Այս սինակներուն մէջ իսկ առիթըր ունեցանք հինգամ ճշմարտութիւն մը նորէն շեշտելու թէ աղտեղութեան և անկանոնութիւններու մէջ մեծյած տը- դաքը ապագային կեղտոտ բնաւո- րութեան տէր, ծոյլ և անհոգ անձեր կ'ըլլան :

Այս օրերս քանի մը նախակրթա- րաններ այցելելով, այն տպաւորութիւնը ստացած ենք թէ այդ կրթական հաստա- տութիւնները կեղտոտ բնաւորութեան տէր, ծոյլ ու անհոգ անձեր պատրաս- տելու բոլոր առաւելութիւնները(?) ու- նին : Մեր երկսեռ նախակրթարանները քիչէն քիչ գոնէ տնտես մը և տնտե- սուհի մը ունին . միթէ կարելի չէ՞ որ ստոնց միջոցաւ մեր նախակրթարաննե- րու պատուհաններուն ապակիները և ձեւիչները աւելի մաքուր վիճակի մը մէջ պահուին : Ամօթ է մեր դպրոցի տեսուչներուն և հոգաբարձուներուն, երբ պատուհաններու ապակիները իրենց թափանցկութիւնը կորսնցուցած են, և ձեւիչներն ալ քիչ շատ զգայուն անձի մը համար անմատչելի : Մենք հա- մոզուած ենք թէ այս պղտիկ կարծուած խնդիրները դպրոցներու ծրագրի խնդիր- ներուն չափ մեծ են, որովհետեւ ծանր են անոնց հետեւանքները :

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐՈՒ ԻՇԽԱՆԸ

Ա. ԱՆՏՈՆԵԱՆ



ԱՐԱՃՈՒՆ յուզման այն շքը- ջանը՝ զոր Բարիզ կ'անցընէ այս պահուս, ուր հին Դի- ցուհի-Քաղաքը՝ որ Գեղեցկու- Թեան, Շնորհներու և մանաւանդ Լոյսի արգանդիչ վր ըլլալէ ետքը, այսօր իր եր- բեմնի հեշտարծարձ կուրծքը կը պարզէ Տրէյ- ֆիւսի գործին թարախով թաթառուն, և ուր յառնջգիմութեան ամենէն պիտաւոր ազ- գակը՝ Մամուլը անգամ լայրձուն քեխի մը մէջ թաթխուած ամէնէն վատ գրուածքները կ'արտադրէ, կ'երեւայ թէ սիրտերը բաւա- կան լոյն են դեռ զբաղելու համար այն տե- սակ խնդիրներով որոնք աւելի անհոգ, ան- վըրդով ու վաղուանին հոգէն բոլորովին զերծ միջավայրերու համար կրնային շատ լաւ յար- մարիլ : Բարիզ՝ իր Մաղիկներու թագուհին, Բարեկենդանի թագուհին ունենալէ ետքը իշխան մը ունեցած էր Բանաստեղծութեան, և այսօր հատ մըն ալ՝ կամ երկու հատ ալ կ'ունենայ՝ որոնք արձակագիրներու պիտի իշխեն . Չոլա և Անաթոլ Ֆրանս : Ամբողջ հեգնութիւն մը, տարօինակ գործ մըն է այս երկու գերազանցապէս բարձր ու միանգա- մայն խոնարհ միաքերուն ընտրութիւնը, եր- կուքն ալ մէկ արգէն իրենց մարդկայնու- թեամբ՝ որ տարբեր արահետներով մէկ կող- մէ Գեղեցկութիւնն ու Արուեստը և ուրիշ կողմէ ճշմարտութիւնն ու Արդարութիւնը զրկած, միեւնոյն սուրբ նպատակին կը դիմէ :

* *

Նոր թերթ մը՝ Լա Վոյոնքե, յղացած է այս ընտրութեան գաղափարը, թէ իր ըն- թերցողներուն և թէ Ֆրանսայի գրագէտնե-

րուն ուղղելով հետեւեալ հարցումը՝ որ այլանդակ առեղծուած մըն է ինքնին . «Ո՞րն է ձեր կարծիքով , ասորով ամէնէն մեծ ֆրանսացի արձակագիրը» : Հարցում մը՝ որուն ճշգրիտ պատասխանը զար մը ետքի սերունդին անգամ հարիւր տարուան ուսումնասիրութիւններէ ետքը կարելի է պիտի չկրնայ տար Որովհետեւ ինչպէս որոշել Արձակը : Ճիւղերը , բաժանումները անհունապէս կը տարբերին իրարմէ . անոնցմէ շատեր ներհակն են ուրիշներու զորս նոյն իսկ կը հերքին յաճախ Արձակը , ինչպէս նաեւ Բանաստեղծութիւնը չի կրնար մէկ հեղինակի մը քով ամբողջական կատարելութեան մը հասնիլ : Ասոր համար է որ Վօլօքի գաղափարը չունի լուրջ հիմ մը եւ մէկն է այն ոստոսաուն , թուուցիկ , անխորհուրդ ծրագիրներէն , որոնք մանաւանդ Բարիզի մէջ կը հիւսուին ամէնէն աւելի : Արձակագիրներու իշխան մը չպիտի կրնայ որոշուիլ նոյն իսկ այն ստեղծ երբ Ֆրանսայի մէջ Մարդկութիւնն ու Միտքը արդի անիշխանական վիճակը զլած , պիտի ձուլուին իրարու հետ , Գիտութեամբ եւ Արուեստով լուծելու համար ընկերային բարելաւման , կեանքի դիւրացման եւ առաջդիմութեան Մայրնիցիրը :

Թիթեւ , լրջութենէ հիմնովին զուրկ գաղափար մըն է Վօլօքի յղացածը . պէտք է կրկնել ասիկա , եւ անոր նպատակին ու արդիւնքին վրայ չօրպածի լայն ժպիտ մը անգամ չարժեր նետել : Գրեթէ բոլոր պագէտները որ պատասխանած են թերթին հրուէրին , այդ միւսնոյն թիթեւութեամբ բմբանած են ընտրութիւնը , եւ իրենց պատասխանները ֆրանսական ոստանին համար ոչ մէկ չփացուցիչ հանգամանք ունին չիտակը . միակ պարագան որ քիչ մը կ'արդարացնէ զիրենք՝ Հանճարի , Սրտի եւ Մտքութեան աէր երկու մեծ դէմքերու շուրջը խմբուած ըլլալին եւ զմտնք խուժանէն զատելնին է , անկէ անդին արժէք մը չունին տրուած պատասխանները , եւ ընդհակառակը ցած վրիժառութիւններու , շահու , ակնկալութեանց , մանր մունր երախտագիտութեանց եւ խաւարունակ հաշիւներու խմբում մը կը կազմեն , որուն մէջ անկեղծները կը խղզուին ազատաներուն քով եւ որոնցմէ բոլորովին մաքուր դուրս կու գան անոնք որ կամ բնաւ

չեն պատասխանած եւ կամ պատասխանելով հանդերձ ոչ մէկու տուած են քուէնին . պարագայ մը՝ որ կ'երեւայ թէ հաշտ չի եկած թերթին , քանի որ առակ մը վայրենութեամբ կոնակր չտեսնող կուզին պէս կը ջանայ պղծել անոնք՝ որ լուծեամբ եւ կամ ուսի ցնցումով մը միայն վերաբերուած են իրենց ուղղուած հրաւէրին :

* * *

Գրագէտներու տուած 200 քուէներուն մէջ Զոլայի եւ Անաթոլ Ֆրանսի անուններն են որ գրուիւր կը մնան , երկուքն ալ գրեթէ 120 անգամէ աւելի յիշուած , մինչդեռ էլէմիր Պուրթ , Լօդի , Բօլ Ատան , Մօռիս Պառնէս , Ժիւլ Լըմէթո հազիւ չորսական քուէ կ'ընդունին , եւ Հիւլյման , Օղթավ Միւպօ , Ժօզէֆին Բէլատան , Ժիւլ Ռենար երկուքէն երեքական : Իսկ Ժոզովուրդը , Զօլան կ'ընտրէ տասնց այլ եւ այլի . զրկուած 5522 քուէներէն 2357ը տրուած են Ժեռմիլայի հեղինակին , այն հսկայ միտքին , որ մինակը կրցաւ ըմբռնել ամբողջ նախապաշարուած ժողովուրդ մը , ուրկէ դեռ երէկ ստուած , անարգուած , արհամարհուած եւ աքսորի բռնադատուած էր , եւ որուն այսօր կուտքը կը մնայ այն ճշմարտութեան եւ արդարութեան դործով՝ որուն իրականացումը փութայնելու եւ ամբողջ ֆրանսական ազգին վրայէն ազատտ համբաւ մը սրբելու համար ամէնէն աւելի տուժեց , մանաւանդ բարոյապէս : Ֆրանսայի մամանակակից պատմութեան մէջ Զոլա ամէնէն մեծ վերանորոգիչն է . եւ ասիկա ապացուցանելու համար պէտք չէ նոյն իսկ իր վերջին դործը , Բարիզը մէջ բերել . կը բաւէ միայն մասնանիշ ընել իր բռնած ընթացքը Տրէյֆուսի այս մեծ խնդրին մէջ , ուրկէ մաքուր դուրս ելաւ հակառակ Բարիզի լրագրութեան վատ մէկ մասին այլանդակ ոտութիւններուն , որով ուղեցին արտուել այդ մեծ մարդը՝ որ կեանքի պայքարը սկսած է սրբղ գրագրութեամբ միայն , եւ որ այսօր , — ստանց բնաւ չեղած ըլլալու պատուի եւ ճշգրտութեան ճամբէն , — մի միայն իր աշխատութեամբ Բարիզի ամէնէն մեծ բարոյական ազդեցութիւն ունեցողներէն մէկը եղած է : Պէտք է ընդունիլ սակայն որ

Զօրս մինակը չէ մնացած այս խնդրին մէջ . իրեն հետ ուրիշներ ալ աշխատած են , ուրիշներ ալ տառապած . Քլէմանտո՝ հակառակ իր ծերութեան , օրական յօգուած մը զրելու ստիպուած է ժողովուրդին սիրտը դէպ ի ճշմարիտը տաք բռնելու համար միշտ , Բիքառ ամիսներով կը տառապի լոյսէ զուրկ բանտի մը չորս պատերուն մէջ , Բուէանտէ միշտ իր անձը վտանգի մէջ կը դնէ , միթիւնկներ գումարելով Տէրուլէտի վատ խմբակին դէմ , որ Ֆրանսան կ'արիւնէ . եւ դեռ Ժօնէս , Միուպօ , Քիյետա եւ այնչափ ուրիշներ կ'աշխատին անընդհատ , այս գերազանցապէս յուսահատեցողիչ պայքարին մէջ , սուանց յուսահատելու : Բայց բոլոր ասոնցմով մէկտեղ , Ֆրանսա Զօրային կը պարտի իր վաղուան համբաւը :


Զօրայէն անմիջապէս ետքը , ժողովրդական քուէին մեծամասնութիւնը կը խմբուի Անաթոլ Ֆրանսի շուրջը . տարբեր տեսակէտով մեծ միտք մը , որուն վճիտ արձակը արգահատանքով ողողուած է եւ ջուրի ցայտքին անարատ յտակութեան հետ ունի այն անուշ ներդաշնակութիւնը՝ զոր լճակի մը ծոցէն ժայթքող ճողփիւնները կ'ունենան : Յետոյ կու գան Լօղին՝ մեծ միամիտը՝ որ իր նկարագրական տաղանդով աւազի անարուեստ տարածութիւն մը կրնայ պարիկի մը պէս զիցական պարտէզի մը վերածել , Միուպօ՝ որ Ֆրանսան պրկող արգի դէպքերուն մէջ՝ ամէնէն մաքուր զերերէն մէկը խաղաց , Բօլ Ատան՝ որուն արձակը ամէնէն հոկայ եւ ամէնէն արուեստոտ ոճը կը մանէ , եւ որուն գործերը հիմակուրնէ իսկ վաղուան Վարպետը գուշակել կու սան , Պսոտէս՝ մեծ միտք մը ինքնին , թէիւ լըրճուած հակահրէականութեան ազտոտ ցեխէն՝ որուն մէջ կը թաթխուի տակաւ : Իսկ վերջին 218 քուէները բաժնուած են քանի մը գորղներու շուրջը , որոնց մէջ Պուրթէ՝ մեծ հոգեւանը , առաջին տեղը կը զբաւէ . անկէ անմիջապէս ետքը կու գան Թէօրիէ՝ որ շատ սիրուն գիւղական նկարագրութիւններով պծնած է Ֆրանսական գրականութիւնը , Բիէր Լուիս՝ որուն գործերէն հելլենական մաքուր արուեստը կը կաթի , Հիւլզմանս՝ մեծ միսթիք մը՝ որ վանք կը քաշուի այս օրերս , քանի մը գաղափարակիր-

ներու հետ նոր երկինք մը պատուելու նպատակով , Բօիէ՝ ամէնէն ապուշ բանաստեղծներէն մէկը զոր Ֆրանսա ունեցած ըլլայ , Ժօզէֆէն Բէլլատան՝ առեղծուածային մոգը , ու վերջապէս Ժօնէս եւ Քլէմանտօ , երկու միտքեր՝ որոնք Զօրայի հերկած դաշտը կ'ոռոգեն այսօր , բողբոջեցնելով ու միեւնոյն ասան ալ գեղեցկացնելով զայն :

Այսպէս , Զօր՝ Ֆրանսայի գրագէտներէն ա ժողովուրդէն իշխան կ'ընտրուի Ֆրանսական գրականութեան արձակին , Ամբողջ հեգնութիւն մը՝ այս ընտրութիւնը՝ որուն վրայ ապահովաբար ինքը՝ Վարպետը պիտի ծիծաղի ամէնէն առաջ , երբ Բարիզ վերադառնալով իր հանդարտիկ խուցը քաշուի , վերսկսելու համար այն աշխատութիւնները՝ որոնք Ֆրանսայի այսօրուան մտաւոր փառքը կը չինեն :

ԿԱՌԱՊԱՆ ՆԷՆՇԵԼ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ Կ. ՀԱՌԻԲՄԱՆԻ



Մ. Ե.

Կէսհարտ Հաուրթման , որու մասին ուսումնասիրութիւն մը արդէն երեւցած է պարբերականի մը մէջ , այս օրերս աւարտած է թատերագութիւն մը՝ Կառպան Հէնշել (Fuhrmann Henschel) որ գրականութեան իր բնապաշտական արտադրութիւն՝ տիպար կատարելութիւն մը ունի , Ինչ որ բնապաշտական ուղղութիւնը կ'ուզէ , ամենքն ալ իրագործուած են այս թատերագութեան մէջ , Բնապաշտութեան զլխաւոր ձգտումն է բնութեան ընթացքին հետեւիլ , իրականութիւնը կեղծել , հաւատացնել տալով թէ ամեն ինչ իբրև թէ ինքնիրեն կը կատարուի , եւ վերջաւորութիւնն ալ իբրև թէ բոլոր իրողութիւններուն ամենաբնական եղբակացողութիւնը եղած ըլլար : Այս ամենուն մէջ բնապաշտ գրագէտին դերն է հանդիսատես ըլլալ թէ ինչպէս մարդկային ճակատագիրը պատճառներու շղթայաւորութե մը անցնելով

կը յանդի իր լրացման : Բնապաշտ հեղինակ մը պէտք չէ իր կողմէն նախատեալուր մտածում մը յայտնէ , ձգտում մը տածէ , սկզբունք մը սեննեայ , այս ամենքը իր ներկայացուցածներուն մէջ քնականօրէն միայն պէտք է գտնուին : Բնապաշտ արուեստը ուրեմն առանց մտածման է , բայց հարկաւ այն իմաստով որ անիկայ հայեցողութիւններով կը կատարէ իր աշխատութիւնը : Ըսողներ ըլլան թերեւս որ գրական գործի մը մէջ գտնուած իրողութիւնները իրար բերելով ամբողջութիւն մը կազմողը նորէն գրադէան է . բայց գրադէան մը՝ իբր բնապաշտ՝ այն ժամանակ իր աշխատութիւնը կատարած կ'ըլլայ երբ , իրեն ներկայացած տիպարները եւ դէպքերը քնականէն աւելուած խմբումներ են միայն , առանց գրական գոգադրութիւններ ըլլալու :

Եկառապան Հէնչըլի մէջ ամէն բան կայ ինչ որ բնապաշտութիւնը կը պահանջէ . այս ընթացքով Կէւհարտ Հաուրթման պիտի դառնայ ընդհանուր Գրականութեան բնապաշտ գպրոցի միահեծան պետը :

Հաուրթմանի այս վերջին թատերգութեան նիւթը շատ պարզ է . կառապան մը որ առաջին ամուսնութեամբ երջանիկ եղած է : Տեսարանը կը բացուի սենեակի մը վրայ որուն մէջ կառապանին կինը հիւանդ պառկած է , երբ ինքն ալ ներս կը մտնէ սենեակէն կառապանի թաց մոյկերով . հիւանդին քով ծառայող սպասուհին ալ հան է , որուն Հէնչըլ կը հրամայէ մոյկերը հանել . Հէնչըլի կինը ախուր նայուածքէ մը վերջը խոստում կ'առնէ ամուսինէն որ իր մահուանէն վերջը այդ սպասուհի աղջկան հետ պէտք չէ ամուսնանայ . Հէնչըլ կը խոստանայ , կառապանին կինը վերջապէս կը մեռնի եւ ինքը կը մնայ առանձին իր փոքրիկ մէկ զաւկին հետ , չուարած , առանց ինամքի : Քանի մը անգամներ միտքէն կ'անցնի ամուսնանալ , բայց չի յանդգնիր կնոջ եւ վկայի մըն ալ ներկայութեան ըրած երգումը ոտքի տակ առնել :

Քիչ մը ժամանակ անցնելէ վերջ նոյն իսկ այն անձը որ երգումին ատեն իբրեւ վկայ ներկայ գտնուած էր , խորհուրդ կուտայ ամուսնանալ ժամանակին իր հիւանդ կնոջ անարին ծառայող աղջկան Հաննէի հետ : Հաննէ ճաշարանի մը մէջ ծառայողի մը հետ սիրային յարաբերութեան մէջ ըլլալով , անկից պզտիկ աղջիկ մըն ալ ունի : Հէնչըլ կը մտածէ թէ Հաննէ իբրեւ մայր , կարող պիտի ըլլայ իր նախորդ կնոջմէն սննանամ մնացած զաւակը եւս խնամել , եւ կ'ամուսնանայ հետը : Հետեւանք կ'ըլլայ գծադրութիւն եւ կառապանը կը կարծէ որ երգումը ոտքին տակ առնելուն հետեւանքն է այդ : Ու վերջին եզրակացութիւնը , իր միամիտ մարդու այդ անդրդուելի համոզումովը անձնատպան կ'ըլլայ :

Այս պարզ , առանց սեթեւեթի նիւթը , Հաուրթմանի նիւթայի մը չափ-զգլխող գրչին տակ դարձած է կեանքի համակ բանաստեղծութիւն եւ զգայման համակ հոգեբանութիւն :

Ի պատասխան անոնց , որոնք թերեւս մտածեն թէ ինչո՞ւ համար կառապանի մը , կամ հասարակ կնոջ մը համար գրողները այսքան հետաքրքրուին , բնապաշտ գպրոցի բոլոր հետեւողները համոզում մը ունին թէ իրենք կեանքի բոլոր երեւոյթները ընկերութեան ստորին խաւերուն մէջ պէտք է փնտրուեն , որովհետեւ այդ խաւերուն մէջ է ուր կեանքը կը ներկայանայ աւելի պարզ , աւելի թափանցող ու աւելի հասկանալի վիճակի մը մէջ : Բարձրութեան մասին սովորական անհաստեղծ ունեցած կարծիքը եւ ճաշակը բնապաշտ արուեստագէտներու համար իմաստ մը չունի : Բոլոր բնապաշտներու սկզբունքն է թէ ամեն ինչ որ իրաւունք , արժէք ունեցած է գոյութեան համար , նսեւ իրաւունք արժէք պէտք է ունենայ ներկայացուելու , մեր զբաղման առարկայ ըլլալու համար :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ե Ի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Մ . Շ .



ԱՂԱՔԱԿԱՆ պատե-
րազմը որ անցեալ ա-
մառ Սպանիոյ և Ամե-

րիկայի Միացեալ Նահանգներուն միջև
կաաարուեցաւ՝ երկու կողմերուն համար
դէշ կամ ազէկ հետեւանքներէ դատ,
ունեցաւ նաեւ մեծ ազդեցութիւն քա-
ղաքակիրթ աշխարհի ընդհանուր դի-
ւանագիտական ուղղութեան վրայ. ազ-
դեցութիւն մը, որուն կամաց կամաց
միայն սկսած են դիտակցել Եւրոպա-
կան մեծ պետութիւնները:

Շատեր թերեւս մտածեն թէ Մ. Նա-
հանգներու խնդիրը Եւրոպայի քաղա-
քական շրջանակներուն մէջ հինցած
խնդիր մըն է. մինչդեռ ճիշդ ատոր
հակառակը, Եւրոպացի դիւանագէտները
ամենէն աւելի հիմա սկսած են զբաղել
Եանքիներով:

Սպանո - Ամերիկեան պատերազմէն
առաջ Մ. Նահանգները քաղաքականա-
պէս առաջնորդող սկզբունքները բոլո-
րովին տարբեր էին քան ինչ սկզբունք-
ներ որ այսօր անոնք կ'ուզեն ընդգրկել:

Միացեալ Նահանգները, երբ Բրի-
տանական կայսրութենէն անջատուելով
առանձին պետութիւն մը կազմեցին,
նախ ընդամենը Յ Նահանգներէ կը բազ-
կանային. իրենց երկիրը իր տարածու-
թեամբ այնքան լայն էր, իր կլիմայով

այնքան պէսպիսութիւններով օժտուած,
և իր հողային արտադրութիւններովը
այնքան բեղուն, որ Եւրոպայի ընդ-
հանրապէս կարօտ կեանքէ մը անջատուե-
լով դէպ ի Սրբեմուտք գաղթողները,
կոյս երկրի մը այս բոլոր առատութիւն-
ներուն մէջ, տեսակ մը ատելութեամբ
դէպի իրենց մայրենի երկիրը, սկսան
ամեն ջանք ընել, կարելի եղածին չափ
խրաչնելու համար իրենց գաղթավայրը,
պատուար կանգնելով դուրսէն, Եւրո-
պայէն եկողներու նորանոր հոսանքին
դէմ: Այս տեսակ մարդկային մտածո-
ղութեան արդիւնքն է յետոյ բանա-
ձեւի վերածուած «Մօնրո» ի սկզբունքը,
որով Եւրոպայէն փրթած եւ հիմա ու-
ճացած այդ նոր գաղութը, սր արդէն
տէրը եղած է մեծ տարածութիւններու,
կ'ուղէ Ամերիկեան վերնապահել Ամերի-
կացիներուն: Եւ որպէսզի կարելի ըլ-
լայ Ամերիկեան Ամերիկացիներուն պահել,
ջանքը ունեցած են Ամերիկացիներն ալ
կեդրոնանալ Ամերիկայի մէջ չի ջլատելու
համար իրենց զօրութիւնը, որուն
արդիւնքն է երբ անոնք Ամերի-
կայէ դուրս ալ չեն ուղած ձգտում-
ներ ունենալ, եւ յաջողած են կէս դարէ
աւելի ներսոյ գործունէութեամբ մը
հասնել այն տեսակ դիրքի մը, որով ԿՏ
Նահանգներու միութեամբ, այսօր մէկ
հարուածով, առաջին առիթին, ինք-
զինքնին Եւրոպայի եօթներորդ մեծ
պետութիւնը կը դարձնեն:

Պատերազմէն առաջ Միացեալ Նա-
հանգներու կառավարութիւնը բոլորո-
վին տարբեր սկզբունքներով, առանձնա-
պէս իր երկրի քաղաքակիրթութեան գոր-
ծին մէջ համակ խորասուզուած, չէր՝ զի-
տակցած այն կառույն որով ընդհանուր,
տիեզերական տնտեսական կեանքի մը
հետեւանքով ինքն ալ սկսած է ուրիշ
ազդերու եւ ուրիշ քաղաքականութիւն-
ներու հետ անմիջական յարաբերու-
թեան մէջ մտնել: Մօնրոսի սկզբ-

բունքն ալ իրեն համար այլևս հինցած պէտք էր նկատել: Ժամանակ մը կար, ուր Մ. Նահանգներու մէջ բարերար աղօղեցութիւն մը ունէր այս սկզբունքը, երբ երկիրը դեռ իր քաղաքակրթական գործի սկզբնաւորութեանը մէջ էր, եւ դուրսին հետ իր տնտեսական կապերն ալ շատ աւելի թոյլ:

Ամենուն գիտցած բանն է արդէն թէ մանաւանդ վերջին տասը տարուան մէջ տնտեսական բոլոր մեծ հրապարակներու վրայ Եանքիներն ալ գլխաւոր մրցակիցները եղած են ընդհանուր աշխարհի ճարտարարուեստներուն մէջ:

Սպանիացիներուն հետ իր ունեցած վերջին պատերազմին մէջ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը ամենէն աւելի յստակ կերպով ցոյց տուաւ ընդհանուր աշխարհին թէ դիտակցած է իր իբրեւ ճարտարարուեստ ժողովուրդ ունեցած տնտեսական ամուր յողերուն, ուրիշ ժողովուրդներու հետ, և ի պահանջել յարկին պատրաստ է իր բովանդակ քաղաքական ոյժը դորձադրել, Արտասահմանի մէջ իր տնտեսական շահերը պաշտպանելու համար, շահեր, որոնք երկրին բարգաւաճման մեծ խոյակներն են: Հիմա որ երկու կառավարութիւններու միջեւ հաշտութեան պայմանագրութիւնն ա'լ կնքուած է պաշտօնապէս, կը հաստատուի այն ձգտումը, որով Ամերիկացիները սկսած են ընդհանուր աշխարհի մէջ իրենց տնտեսական շահերը պաշտպանել: Եւ որպէս զի կարող ըլլան, իբրեւ ճարտարարուեստ պետութիւն մը յաջող կերպով յառաջ տանիլ իրենց գործը, հարկադրուած են կազմակերպուած բանակ մը և տորմիզ մը ունենալ: Պատերազմէն առաջ ամբողջ Միացեալ Նահանգներու մէջ միայն 27000 հոգիէ բաղկացեալ կանոնաւոր բանակ մը կար մարտանաւերու սահմանափակ թիւով մը: Այսօր հաշտութեան կնքումէն

վերջը, քուէտրկուած է մէկ անգամէն 100000 ի բարձրացնել երկրին կանոնաւոր բանակը եւ 100 միլիոն ֆրանքի ալ վարկ մը բացուած է տորմիզը զօրացնելու համար: Ինչո՞ւ այս ամենքը ուն ալ հաշտութեան կնքումէն վերջը: Որովհետեւ կառավարութիւնը համոզուած է թէ Բուպայի, Փիլիպիններու եւ Բորթօ-Տիքոյի միջոցաւ աւելի ծաւալ պէտք է ստանայ երկրին տնտեսական կեանքը, ու աւելի տարածուած տնտեսական կեանքի մը համար ալ անհրաժեշտ է աւելի ծաւալուն քաղաքական ոյժ մը: Աշխարհի ամենէն վաճառական ժողովուրդն է այսօր Անգլիա, եւ ատոր համար ամենէն զօրաւոր տորմիզը ունի որուն չեն հաւասարիլ նոյնիսկ երկու մեծագոյն պետութիւններու տորմիզին միացեալ ոյժերը:

Ամեն ժամանակներու մէջ բարոյական սկզբունքները ու բարքերը կը կազմուին, ներկայ կեանքին անհրաժեշտ պահանջներուն վրայ ձեւուելով: Կեանքի նոր պահանջներ ծնունդ կու տան բարոյական նոր սկզբունքներու եւ նոր բարքերու: Ինչ որ Մ. Նահանգներու համար իմաստութիւն ու բարոյականութիւն չէր նոյն իսկ ասկից տասնեակ տարի մը առաջ, հիմա երկրին քաղաքականութիւնը դարձած է: Նոյն իսկ տարի մը առաջ Մծնրոի սկզբունքը իր ջերմ պաշտպանները ունէր Ուոշինկթընի խորհրդարանին մէջ. պէտք էր որ Մ. Նահանգներու ժողովուրդը բարոյական Ամերիկայի մէջ կեդրոնանար չի բռնուելու համար ուղղման բոլոր ծախքերուն, զորս ամբողջ Եւրոպա հարկադրուած է այսօր ընելու:

Ժամանակները փոխուած են սակայն, ու փոխած են նաեւ այդ երեսփոխանները իրենց լեզուն. էապէս առանց դուրսինին հետ կապակցութեան, զարգացում չի կայ այսօր ժողովուրդներ-

րու համար, եւ եթէ ըլլայ իսկ, շատ խախտւտ միայն կրնայ ըլլալ այդ գարգացումը: Մ. Նահանգները իրենց երկրին արտադրութիւններովը հարուստ եւ ճարտարարուեստներով շատ դարձունեայ անհրաժեշտարար պէտք ունին օտար հրապարակներու, իրենց ապրանքները քչերու համար: Օտարներու հետ իրենց այս շփումէն սակայն կը ծնին նոր պայմաններ որոնց մէջ շահաւոր ելլելու համար զօրաւոր քաղաքականութեան մը պէտք կայ, որով այսօր ամեն քաղաքակիրթ երկիր, որ նաեւ ճարտարարուեստական երկիր մըն է կը ձգտի զօրաւոր քաղաքականութեան մը համար զօրաւոր միջոցներ ձեռք անցնելու: Այս ձգտումին մէջ Մ. Նահանգներն էին միայն որ քիչ մը դժկամակած էին գործունեայ դեր մը ստանձնելու եւ մանաւանդ եւրոպական մեծ պետութիւններն ալ Մ. Նահանգները առանց էապէս հաշուի առնելու հաստատած էին իրենց երկկողմանի հաւասարակշռութիւնը ընդհանուր աշխարհի խաղաղութեան պահպանման գործին մէջ:

Այսօր երբ Մ. Նահանգները յանկարծ եւրոպական մեծ պետութիւններուն չափ կը նետուին այդ ձգտումին մէջ, զօրայնելով իրենց ռազմական ոյժերը, այս բոլորի ազդեցութեան տակ, մեծ պետութիւններու դաշնակցութիւններու միջոցաւ հաստատած երկկողմանի հաւասարակշռութիւնը կը սկսի երեւալ:

Գլխաւորաբար Ռուսաստան կը մտատանջուի Մ. Նահանգներու իբր ռազմական պետութիւն մը դիւանագիտական աշխարհին մէջ յայտնուելէն: Ռուսաստան արդէն միշտ իր դէմը ունի Անգլիան, որուն նոյն իսկ ներկայ ընդհանուր ռազմական սրատրաստութիւնները կարծուեցաւ թէ հիւսիսի Սլաւներուն ռզգուած ըլլան:

Հիմա Ռուսաստան կը վախնայ թէ մանաւանդ Մայրագոյն Արեւելքի մէջ Մ. Նահանգներու եւ Անգլիոյ դաշնակցութեամբ Անկլո-Սաքսոն ցեղը կունենայ Սլաւոնական ցեղին դէմ գերականցութիւն մը:

Մայրագոյն Արեւելքի մէջ Անկլո-Սաքսոններուն քաղաքական գերազանցութիւնը Սլաւոններուն դէմ սակայն իրեն հետեւանք պիտի ունենայ Անկլո-Սաքսոններու անտեսական գերազանցութիւնը Մայրագոյն Արեւելքի մէջ եւ այս անգամ բովանդակ եւրոպայի հանդէպ: Ասոր համար ստիպուած է նաեւ եւրոպա Անկլո-Սաքսոններու եւ Սլաւներու Մայրագոյն Արեւելքի մէջ իրարու դէմ ունեցած շարժումը չեղաքացնել:

Եւրոպական մեծ պետութիւններու միջեւ, արդէն Միացեալ Նահանգներու այսքան շեշտուած կերպով երեւելէն առաջ ալ տեւական դարպաս մը կար միշտ դէպի իրար նոր դաշնագրութիւններ կազմելու համար:

Այս քաղաքական դարպասներու ու նիզակակցութիւններու փոխադարձ յարաբերութեան մէջ Եւրոպա յաջողած էր մինչեւ աստիճան մը ընդհանուր եւրոպայի խաղաղութիւնը ապահովել:

Եւրոպայի համար Միացեալ Նահանգները նոր պետութիւն մին են հիմայ նոր սկզբունքներով եւ նոր ոյժերով: Ռոպհետեւ ամբողջ եւրոպայի մէջ Միացեալ Նահանգները կը նկատուին Անգլիոյ իբր բնական նիզակակիցը. ասով կը սկսին ամեն տեսակ փորձեր ըլլալ չի վրդովելու համար աշխարհի անդորրութիւնը: Ռուսական կառավարութեան գէնընկեցութեան առաջարկը արդիւնքն էր Միացեալ Նահանգներու յայտնուելուն եւրոպայի դիւանագիտական շրջանակներուն մէջ:

Մանաւանդ վերջին դարու անխնձ աշխատութեան արդիւնքն է Մ. Նահանգներու ներկայ նոր քաղաքակրթութիւնը եւ անտեսական, ճարտարարուեստական բարգաւաճումը, որ հիմա իր առանձին շրջանակէն դուրս ելնելով կ'ուզէ ամեն տեղ տարածուիլ: Ասիկա թերեւս սկզբնաւորութիւնն է եւրոպայի համար, որպէս զի նոր դաշնագրութիւններ, նոր նիզակակցութիւններ կատարէ, միշտ ընդհ. խաղաղութեան ապահովմանը համար:

Արտօնատէր Կ. Ս. Իթիթիձեւս

Տպագրութիւն Տ. ՃիվէլէԿեւս



հան
նաւ
րար
վճա
նաե

սիս
թիւ
փու

թեր

կացո
թիւ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Պ Ո Լ Ս Ո Յ Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Պօլսոյ մէջ գտնուող այն բարձր անձերէն, որոնք «Մասիս» կիսամսեայ հանդէսի առաջին թիւը ստացած են և կը փափաքին յաջորդ թիւերն ալ կանոնաւոր կերպով ստանալ, կը խնդրուի որպէս զի փութան գոնէ մեր կրկին յայտարարութեան վրայ, ներկայ թիւը ստանալէ յետոյ թերթին բաժանորդագինը վճարել: Պօլսոյ ընթերցողներուն դիւրութիւն մը տարու համար բացած ենք նաեւ եռամսեայ բաժանորդագրութիւն 11 ղրշ-ի:

Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր Ո Ւ Ե Ի Ա Ր Տ Ա Ս Ա Շ Մ Ա Ն Ի Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Գաւառներու և Աստատահմանի մէջ գտնուող ամեն անոնք որոնք «Մասիս»-ի առաջին թիւը ստացած են և կը փափաքին որ նոյն թերթին յաջորդ թիւերուն առաքումն ալ շարունակուի, կը խնդրուի իրենցմէ, որպէս զի փութան, մինչեւ ներկայ ամսոյս վերջը, զրկել իրենց բաժանորդագինը:

«ՄԱՍԻՍ» ԿԻՍՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՅՅՈՒՄԾ Է

Պ Ո Լ Ս Ո Յ Հ Ա Մ Ա Ր

Տարեկան	24 թիւ (768 էջ)	44 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	22 " "
Եռամսեայ	6 " (192 էջ)	11 " "

Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Տարեկան	24 թիւ (768 էջ)	54 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	27 " "

Ա Ր Տ Ա Ս Ա Շ Մ Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

Տարեկան	24 թիւ (768 էջ)	12 ֆրանք
Վեցամսեայ	12 " (384 էջ)	6 " "

«ՄԱՍԻՍ» ԶԵՌՔԷ ԿԸ ԾԱՆՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐՇ.

«Մասիս»-ի վերաբերեալ ամեն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել թերթիս անօրէն-խմբագրին

Մ Բ Զ Ա Յ Է Լ Գ Ա Ս Տ Ա Ն Ճ Ե Ա Ն

Սթամպոլ, Պապը Ալի ճատտէսի, թիւ 20
 Stamboul, Avenue de la S. Porte No 20

Թիթերթիս կողքին վերջին երկու երեսները ազգարարութիւններու յատկացուած են: Գիներու համար դիմել Տնօրէնին, Սթամպոլ, Պապը Ալի ճատտէսի թիւ 20

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳՐԲԵՐ

Կենցաղ և Գաստիարակութիւն ՀԻՐՊԼՐԳ ՍԲԷՆՍԸՐԻ,
Թարգմ. Յ. Գ. Մրմրեանի, տպագրութիւն Մատթէ-
ոսեան, գին 10 դր.

Տըթ. Իւթիւճեան իր ԱՌԱՋՆՈՐԳ ԱՌՈՂՋԱՊԱ-
ՀՈՒԹԵԱՆ աշխատասիրութեան 20-րդ տետրակը հրա-
տարակած է որ կը խօսի Գինովութեան վրայ: Մեր
ալքօօրամոյներուն կրնայ օգտակար ընթերցանութիւն
մը ըլլալ, և ամենուն ալ առողջապահական միջոցներ
յուշնել ալքօօրի գէմ: Սոյն տետրակի վաճառումէն
գոյացած հասոյթը պիտի յատկանայ Պոլսոյ չորս կա-
րեւոր թաղերու տղքատաննամբ ընկերութեանց:

Կը ծախուի ամէն գրավաճառի քով. հասար 40 փրյ:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Գ. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

Բերա, Մեծ Փողոց քի. 200. Կալարա Սերային դիմաց

Կը կատարէ ակուայի վերաբուժական և արհես-
տակոն ամեն տեսակ դործողութիւն: Ակուայի քա-
շիւր թմրեցուցիչ Դեղերով: Աղքատները ձրի կը դար-
մանուին: 5-1

ՄՏԻՈՎ ԶԲԱՂՈՂՆԵՐՈՒՆ



Մտքով զբաղողներ յաճախ իրենց
աշխատութեան միջոցին մտաւոր տեսակ
մը յոգնութիւն կը զգան, և կ'աշխատին
բաժակ մը խահուէով ամօքել իրենց
յոգնութիւնը. այդպիսիները բոլորովին
կը սխալին: Թող գոնէ մէկ անգամ փոր-
ձեն Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
թէյի վաճառատունէն տուի մը թէյ
զնել և մտաւոր յոգնութիւն զգացած ատեն բաժակ մը
խմեն, իսկոյն պիտի զգան թէ այդ վաճառատան թէյը
որչափ մտքի սրբողութիւն կուտայ: Այն մարդիկը ու-
րոնք թէյ խմողներ են, համեմատաբար ուրիշներէ ա-
ւելի յստակ միտք մը կ'ունենան, և դատողութեամբ
ալ աւելի արագ կ'ըլլան:

Ուշագրութիւն վաճառատան մարքային:
Վաճառատուներ կը գտնուի ձեյալ պէյ խանի տակ, քի. 10